



ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՂԹՆԻ
ՄԻՋԲԱՐԲԱՌԸ

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԳՈՂԹՆԻ
ՄԻՋԲԱՐԲԱՌԸ**

ԵՐԵՎԱՆ 2021

ՀՏԴ 81'28

ԳՄԴ 81.51-02

Վ 301

Գիրքը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ
Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը

*Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների թեկնածու
Հասմիկ Նաչատրյան
Գրախոս՝
բանասիրական գիտությունների դոկտոր
Վիկտոր Կատվայան*

Վարդանյան Արտակ Վարդանի

Վ 301 **Հյուսիսային Գողթնի միջբարբառը** / Ա. Վարդանյան.–
Եր.: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ,
2021.– 124 էջ, 1 քարտ., 2 գծ.:

Գրքում քննության են առնված անցյալ դարում հայա-
թափված Նախիջևանի Գողթն գավառի հյուսիսային Բիստ,
Խուրստ, Մերոպական, Ողոհի, Ռամիս, Փառակա տեղա-
բնիկ գյուղերի խոսվածքները: Հաշվի առնելով բնակավայրե-
րի բարբառային հատկանիշների ուսումնասիրության արդ-
յունքում ի հայտ եկած սերտ առնչությունները՝ խոսվածքա-
խումբը անվանվել է Հյուսիսային Գողթնի միջբարբառ:

ՀՏԴ 81'28

ԳՄԴ 81.51-02

ISBN 978-9939-9235-8-1

© Արտակ Վարդանյան, 2021

*Գործընկերոջս և անմոռաց բարեկամիս՝
բարբառազետ Անի Հանեյանի
հիշատակին*

Գրքի տպագրությունը
ի հիշատակ մոր՝ արմատներով ողորհեցի
Վարդուհի Մելքոնի Մելքոնյանի
հովանավորել է
«Գասարինյ» ՍՊԸ-ի տնօրեն
Գագիկ Սուքիասյանը

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Հյուսիսային Գողթնի միջբարբառ» գրքում հեղինակը ներկայացնում է տարիների իր հետազոտական աշխատանքի արդյունքները:

Աշխատանքում ուսումնասիրողը անդրադառնում է Նախիջևանի տարածքի չուսումնասիրված խոսվածքների մի խմբի՝ Հյուսիսային Գողթնի խոսվածքներին, որոնց նկատմամբ կիրառելով բարբառների բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը, հանգում է եզրակացության, որ դրանց հնչյունաբանական և ձևաբանական հատկանիշները դրսևորում են բավական սերտ մերձավորություն, ուստի այդ միավորները կարող են դիտվել որպես միևնույն բարբառի կամ միջբարբառի խոսվածքներ:

Խոսվածքախմբի միջինացված հատկանիշները համեմատելով հարևան բարբառային միավորների հատկանիշների հետ՝ բարբառագետը եզրակացնում է, որ հիշյալ խոսվածքները ներկայացնում են բարբառային այնպիսի միավոր, որը մերձավոր առնչություններ ունի շրջակա մեկից ավելի բարբառների հետ, ուստի այդ միավորը առանձնացնում և անվանում է Հյուսիսային Գողթնի միջբարբառ:

Հեղինակի դիտարկումներն ու եզրահանգումները գիտականորեն հիմնավորված են: Գրագետ շարադրանքով արժեքավոր այս աշխատանքը նորություն է բերում հայ բարբառագիտության տեսանկյունից՝ ոչ միայն հայերենի չուսումնասիրված բարբառային միավորի քննության, այլև մեր կորուսյալ հայերենիքի կենտրոնական հատվածներից մեկին՝ Գողթն-Նախիջևանին նվիրված հետազոտությունների շարքը շահեկանորեն լրացնելու առումով:

Կարծում ենք, որ մենագրությունը օգտակար կլինի հայագետների և հայերենագիտությամբ հետաքրքրվողների համար:

Վիկտոր Կատվայան
Բանասիրական գիտությունների դոկտոր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախիջևանի տարածքը, ընդգրկելով պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի Գողթն և Նախ-ճավան, Սյունիք աշխարհի՝ Ճահուկ և Երնջակ, Այրարատ աշխարհի՝ Շարուր գավառները, լինելով տարբեր ազգագրական շրջանների խաչմերուկ, բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային տեղաշարժերի, օժտված է եղել բարբառային խիստ բազմազանությամբ:

Խորհրդային Ադրբեջանի կողմից անցյալ դարում իրականացված հակահայ քաղաքականության հետևանքով ոչ միայն իսպառ հայաթափվեց ողջ երկրամասը, ոչ միայն ամբողջովին ոչնչացվեցին տարածքի հայ մշակույթի բազմահազար հուշարձանները, այլև իրենց իսկ բնօրրանից արմատախիլ լինելով՝ ոչնչացան հայերենի ամբողջ խումբ բարբառներ:

1918-1920թթ. իրադարձությունների նախօրյակին, երբ Նախիջևանի բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմում էին հայերը, տարածքն ընդգրկում էր շուրջ յոթ տասնյակ հայաբնակ քաղաքներ և գյուղեր: Բնակչության գերակշիռ մասը խոսում էր 1828 թվականից այստեղ հաստատված վերաբնակների բար-

բառներով՝ Խոյի (33 բնակավայր), ինչպես նաև Մարա-
ղայի (3 բնակավայր) բարբառներով: Պահպանվել էին
նաև տեղաբնիկ բարբառները՝ Ագուլիսի (7 բնակավայր),
Ջուղայի (1 բնակավայր), Արարատյան (4 բնակավայր),
Արցախ-Սյունիքի (6 բնակավայր) բարբառները, Ճահուկ-
Վայքի միջբարբառը (2 բնակավայր), Հյուսիսային Գողթ-
նի խոսվածքները (6 բնակավայր): Բնակչության ներքին
տեղաշարժերի հետևանքով առաջացել էին նաև խառը
խոսվածքներ (միջխոսվածքներ)՝ Ջուլֆայի (Ջուղայի-
Խոյի), Որդուարի (Ագուլիսի-Մարաղայի-Խոյի)¹:

Ագուլիսի բարբառը կամ զոկերենը ընդգրկում էր
պատմական Գողթն գավառի հարավային մասում տե-
ղադրված Վերին Ագուլիս ավանը, Ներքին Ագուլիս, Տա-
նակերտ, Ցղնա, Քաղաքիկ, Դիսար, Հանդամեջ գյուղերը:
Լինելով հայերենի տարածքային ամենաառանձնահա-
տուկ տարբերակներից մեկը՝ այս բարբառը ժամանակին
պատշաճ ուսումնասիրվել է ինչպես հայ, այնպես էլ
օտար լեզվաբանների կողմից, սակայն գավառի հյուսի-
սային մասում տեղադրված Բիստ, Մեսրոպական
(Նասրվազ), Ողոհի (Ալահի), Փառակա և Ռամիս գյու-
ղերի խոսվածքները, որոնք առաջին իսկ հայացքից
իրենց հատկանիշներով առանձնանում են շրջակա
բարբառներից և լեզվական բավական սերտ առնչություն
են ներկայացնում, առանձին ուսումնասիրության չեն

¹ **A. Vardanyan**, *Dialectologic Map of Nakhidjevan*, Apaga, N. 19,
2004, Tehran.

ենթարկվել: Այս խոսվածքներին իրենց նշանավոր բարբառագիտական ուսումնասիրություններում թուցիկ անդրադարձել են Սարգիս Սարգսյանը և Հրաչյա Աճառյանը: Ս. Սարգսյանը «Ագուլեցոց բարբառը (գոկերի լեզուն)» աշխատանքում Ռամիսի խոսվածքը նույնպես Ագուլիսի բարբառ է համարել²: Ուշագրավ է, որ Հ. Աճառյանը «Քննություն Ագուլիսի բարբառի» ուսումնասիրության մեջ Հյուսիսային Գողթնի խոսվածքներից ոչ մեկը չի ընդգրկել Ագուլիսի բարբառի տարածման սահմաններում, սակայն Փառակայի և Ռամիսի խոսվածքները բնութագրել է որպես Ագուլիսի բարբառին մոտ, բայց նրանից տարբերվող խոսվածքներ³, իսկ Ողոհի, Բիստ, Մեսրոպական գյուղերի, ինչպես նաև փոքրաթիվ բնակչություն ունեցած և այդ ժամանակ արդեն իսպառ հայաթափված Խուրստ գյուղի խոսվածքները համարել է Արցախի բարբառին մոտ խոսվածքներ: Մարի Զաքարյանը «Ագուլիսի բարբառը» աշխատանքում, կրկին հպանցիկ անդրադարձով, Փառակայի և Ռամիսի խոսվածքները համարում է Ագուլիսի բարբառի խոսվածքներ, իսկ Ողոհիի, Բիստի և Մեսրոպականի խոսվածքները՝ առավելապես Արցախի բարբառին մոտ խոսվածքներ⁴:

² Ս. Սարգսեանց, *Ագուլեցոց բարբառը (գոկերի լեզուն)*, Մ., 1883, էջ 16:

³ Հ. Աճառեան, *Քննություն Ագուլիսի բարբառի*, Ե., 1935, էջ 327-329:

⁴ Մ. Զաքարյան, *Ագուլիսի բարբառը*, Ե., 2008, էջ 7:

Նպատակ ունենալով ճշտելու այս վեց գյուղերի⁵ խոսվածքների հատկանիշների մերձավորությունը՝ կատարել ենք ոչ միայն խոսվածքների հատկանիշների համեմատական քննություն, այլև կիրառել ենք Գևորգ Զահուկյանի բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը:

Պարզելով, որ թեև Հայերենի բարբառագիտական աստլասի ծրագրով ժամանակին գրանցվել են այս գյուղերի խոսվածքներից չորսը, սակայն պահպանվել են միայն երեքը (Փառակա, Մեսրոպավան, Բիստ), և հաշվի առնելով, որ տառացիորեն վերջին բարբառախոսներն են մեր օրերում ապրում Ռամիս և Ողոհի գյուղերի նախկին բնակիչներից, անհապաղ ձեռնամուխ եղանք այս երկու բնակավայրերի խոսվածքների գրանցմանը:

Փառակայի խոսվածքը 1976 թվականին ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով գրանցել է Հայաստանի ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակից Ալբերտ Խաչատրյանը (բարբառախոսներ՝ Գուրգեն Հարությունյան (ծնվ.1909, Փառակա), Սուրեն Աղամյան (ծնվ.1906, Փառակա), Վարդուշ Գալոյան (ծնվ.1919, Փառակա))⁶:

⁵ Խուրստի խոսվածքի վերաբերյալ թեև նյութեր չեն պահպանվել, այնուամենայնիվ Հ. Աճառյանի վկայությամբ և Գողթնի տարեց բնակիչների հաստատմամբ իր հատկանիշներով այն շատ նման է եղել Բիստի, Մեսրոպավանի և Ողոհիի խոսվածքներին:

⁶ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արխիվ, ՀԲԱ ծրագրով հավաքված նյութեր, տետր հ. 13:

Մեսրոպավանի խոսվածքը 1983 թվականին ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով գրանցել է Հայաստանի ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակից Ժաննա Միքայելյանը (բարբառախոսներ՝ Հակոբ Հակոբջանյան (ծնվ.1912, Մեսրոպավան), Իսկուհի Հակոբջանյան (ծնվ.1921, Մեսրոպավան)⁷:

Բիստի խոսվածքը 1983 թվականին ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով գրանցել է Հայաստանի ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակից Անահիտ Մկրտումյանը (բարբառախոս՝ Վաղինակ Հովակիմյան (ծնվ.1925, Բիստ)⁸:

Ռամիսի խոսվածքը ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով գրանցել ենք 2018 թվականին (բարբառախոսներ՝ Մարուսյա Կոսկանդեյան (ծնվ.1932, Ռամիս), Բորիս Միքայելյան (ծնվ. 1943, Ջուլֆա, ապրել է Ռամիսում), Սեյրան Մարգարյան (ծնվ.1959, Ռամիս)⁹:

Ողոհիի խոսվածքը մեզ հաջողվեց գրանցել միայն ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակի՝ 2018-2019 թվականներին՝ Երևանում և Վալոց ձորի մարզի Գողթանիկ գյուղում բնակվող՝ նախկին ողոհեցիներից (բարբառախոսներ՝ Ռուբեն Մարտիրոսյան (ծնվ. 1932, Ողոհի), Ֆելիքս Առուստամյան (ծնվ. 1947,

⁷ Նույն տեղում, տետր հ. 228:

⁸ Նույն տեղում, տետր հ. 215:

⁹ Ա. Վարդանյանի անձնական արխիվ (ձեռագիր):

Ողոհի), Լիպարիտ-Բաբկեն Դավթյան (ծնվ. 1930, Ողոհի), Մայրիկ Եղիազարյան-Գասպարյան (ծնվ. 1929, Ողոհի), Վոլոդյա Առաքելյան (ծնվ. 1951, Ողոհի):

Հյուսիսային Գողթնի վերոհիշյալ բնակավայրերի անունները, որքան էլ դարերի ընթացքում փոփոխվել և աղավաղվել են օտարների կողմից, այնուամենայնիվ մեծ մասամբ պահպանել են հայերեն արմատները:

Բիստը Ստեփանոս Օրբելյանի՝ Սյունիքի բնակավայրերի հայտնի ցուցակում հիշատակված է **Բուստ** ձևով¹⁰: Դատելով գյուղի գեղատեսիլ դիրքից, գյուղանվան նախնական ձև կարելի է ընդունել հենց **Բուստը**, որը հին հայերենում ունի «մարջան» իմաստը¹¹, իսկ **Բիստ** ձևը հետագայում, հավանաբար ժողովրդական ստուգաբանությամբ, բառիմաստի մթագնմամբ և պարսկերեն **bist** («քսան») բառի նմանությամբ է ձևավորվել:

Խուրսը (**Խուրստ**, **Խուրց**) անցյալ դարասկզբին տարածքի ամենասակավաթիվ բնակչությամբ գյուղն է եղել¹², որը, ի դեպ, տեղադրված է եղել գավառի ամենահյուսիսային մասի խոր ձորերում: Կարծում ենք, որ գյուղանունը բխում է հայերեն **խորք** բառի հայցական

¹⁰ Ս. Օրբելյան, *Սյունիքի պատմություն*, Ե., 1986, էջ 259, 403:

¹¹ Ա. Վարդանյան, Նախիջևանի որոշ տեղանունների ստուգաբանության շուրջ - *«Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր*, Ե., 2018, էջ 258-270:

¹² Հ. Աճառեան, *Քննություն Ազուլիսի բարբառի*, Ե., 1935, էջ 8: Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բաբսեդյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 2, Ե., 1988, էջ 827:

հոլովի **խաբս** ձևից, որը ենթարկվելով Ագուլիսի բարբառին և շրջակա խոսվածքներին բնորոշ **o > ու** հնչյունափոխությանը (ինչպես խոտ > **խուտ**, ծոց > **ծուց**, գործ > **գուռծ**, փոթ > **փունթ** և այլն), դարձել է **խուրս**: Բնականվան երկրորդ տարբերակում բառավերջում հավելվել է **տ** աճականը (ինչպես Սալմաս-**Սալմաստ**, Սուքիաս-**Սիքիաստ** և այլն), իսկ երրորդ տարբերակում առկա է հնչյունի բարդացման հնչյունափոխական երևույթ (ս > ց):

Մեսրոպական գյուղը հայտնի է նաև աղավաղված **Մարվանիս**, **Մասրևան**, օտար **Nəsirvaz** անուններով: Սա այն նշանավոր պատմական գյուղն է, որի մերձակա քարայրերում ճգնել է Մեսրոպ Մաշտոցը՝ հայոց գրերի ստեղծմանը նախորդող տարիներին¹³:

Գողթնի հյուսիսային մասում տեղադրված **Ռամիս** գյուղի բնակիչների մասին Ագուլիսում և շրջակա գյուղերում բազմաթիվ զվարճախոսություններ էին տարածված, որոնցում ռամիսցիներին կատակով համարում էին լեռնական գեղջուկներ: Ուստի, գյուղանվան նախնական ձև կարելի է համարել **Ռամիկքը**, որտեղ տեղի ունեցած **կք > ք** միաձուլումից և հայցականաձև կիրառումից առաջացել է **Ռամիս** ձևը: Բարբառային **Ռումիս** տարբերակից է բխում աղբբեջաներեն **Urmis** ձևը:

¹³ Ե. Լալայեան, *Գողթն. Օրդուբադի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան*, Թիֆլիս, 1897, էջ 86:

Ողոհի գյուղանունը պատմական ուսումնասիրություններում հայտնի է նաև **Աղահեցիկ** տարբերակով¹⁴: Ըստ երևույթին՝ այս տեղանունն ունեցել է նաև **Աղահի** միջանկյալ տարբերակը, որից էլ բխում է բարբառային **Ալանի** ձևը: Վերջինիս նույնությամբ կրկնում է աղբրեջաներեն **Յեհի** ձևը: Հ. Աճառյանը գյուղանունը մի քանի անգամ հիշատակել է նաև **Ալլահի** ձևով¹⁵, որը, կարծում ենք, սխալ ձև է, քանի որ **լ** հնչյունի կրկնություն չունի ո՛չ գյուղանվան բարբառային ձևը, ո՛չ գրական ձևը, ո՛չ էլ անգամ օտար ձևը:

Փառակա գյուղանվան նախնական ձևը, անշուշտ, **Փառական** է («փառավոր» նշանակությամբ), հետագայում բառավերջի **ն** հնչյունի անկմամբ առաջացել է **Փառակա** ձևը: Ի դեպ, **Փառական** անվանումով դաշտ, քաղաք և այլ աշխարհագրական անուններ հայտնի են նաև պատմական Հայաստանի այլ տարածքներում¹⁶:

¹⁴ **Ա. Այվազյան**, *Նախիջևանի վիմագրական ժառանգությունը. Գողթն գավառ*, հ. Գ, Ե., 2007, էջ 43-45:

¹⁵ **Հ. Աճառեան**, նշված աշխատանքը, էջ 8, 328-329:

¹⁶ **Թ. Հակոբյան**, **Ս. Մելիք-Բախշյան**, **Հ. Բարսեղյան**, նշվ. աշխ., հ. 5, Ե., 2001, էջ 236-237:

**ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՈՂԹՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ
ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հյուսիսային Գողթնի վերոհիշյալ գյուղերի խոսվածքներն ունեն ընդհանուր հնչյունական համակարգ, որը հիմնականում ընգրկում է 42 հնչյուն:

Բաղաձայնները 33-ն են. ձայնեղ պայթականներ և պայթաշփականներ՝ **բ, գ, գ', դ, ձ, ջ**; խուլ պայթականներ և պայթաշփականներ՝ **պ, կ, կ', տ, ծ, ճ**; շնչեղ խուլ պայթականներ և պայթաշփականներ՝ **փ, ք, ք', թ, ց, չ**; ձայնեղ շփականներ՝ **զ, ժ, ղ, վ**; խուլ շփականներ՝ **ս, շ, խ, ֆ, հ**; ձայնորդներ՝ **լ, մ, յ, ն, ո, ր**.

Չայնավորները 9-ն են՝ **ա, է, ը, ի, ու, օ, ն, օ, ու**:

Ժամանակակից գրական հայերենի հնչյուններից տարբերվում են **ն, օ, ու** քմային ձայնավորները և **գ', կ', ք'** քմային բաղաձայնները:

Մեսրոպավանի խոսվածքում փոքր հաճախականությամբ առկա է նաև Արցախ-Սյունիքի տարածքի¹⁷ և Մեղրու¹⁸ խոսվածքներին բնորոշ **ի** ձայնավորը, որը վերին բարձրացման **ը** է (**տի**րեղ < տերև, **քի**շեր < զիշեր,

¹⁷ **Ա. Սարգսյան**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 6:

¹⁸ **Է. Աղայան**, *Մեղրու բարբառը*, Ե., 1954, էջ 17:

զիբրթնրիլ < զարդարել, **յիբրն** < վրա և այլն) և առավել նվազ հաճախականությամբ առկա է նաև **Բիստի խոսվածքում** (**վիբրն** < վրա, **միբծննիլ** < մեծանալ, **զիբրթնրիլ** < զարդարել և այլն): Սակայն այս հնչյունը թույլ է արտահայտված և երկու խոսվածքներում էլ հնչում է գրեթե ինչպես պարզ **ի**:

Սահմանափակ դիրքերում առկա է նաև Նախիջևանի տարածքի որոշ խոսվածքներին բնորոշ **ռ**¹⁹ շնչեղ ձայնորդը (**վօռնը** < որդն, **վօռնիլ** < որդնել (Մեսրոպավան), **կօռնուկ** < գորտ(նուկ), **ռօռնը** < որդն (Ռամիս, Փառակա) և այլն):

Քմային **ն**, **օ**, **ռ** հնչյունները առաջնային շարքի՝ վերին բարձրացման ձայնավորներ են, հանդիպում են ինչպես նոր փոխառություններում, այնպես էլ բնիկ բառերում.

Բիստի խոսվածք¹ **դնջնլն** («կաշաղակ»), **ամմբուլ** («հասկ»), **բըրդնն** («հանկարծ»), **խնմբնր** («եգիպտացորեն»), **զնհնր** («թույն») և այլն, ինչպես նաև՝ **կըճռն** (< կճուճ), **ճռր** (< ջուր), **ծռվ** (< ձու), **զնտիկ**¹ (< զատիկ), **տնննկ**¹ (< դանակ), **տծի** (< դոխ), **կնպրուտ** (< կապույտ), **տռնդռում** (< դդում) և այլն:

¹⁹ **Ա. Վարդանյան, Վայոց ձորի միջբարբառը**, Ե., 2004, էջ 17-19:

Մեսրոպավանի խոսվածք՝ խանգանլ («չոր տերև»),
զանբռնլ («զամբյուղ»), քռնլանշ («ծղոտ»), լնբմ («գոլ»), դռնզ
(«ճիշտ, ուղիղ») և այլն, ինչպես նաև՝ անվռնլ (< ավել), ան-
գիզ (< ընկույզ), կանբռնք (< գարուն(ք)), կանզանբ (< գա-
գար), կանբմռնբ (< կարմիր), պանզոնկ (< բազուկ), քան-
բանբռնլ (< գերանդի), լռնս (< լույս) և այլն:

Ողոհիի խոսվածք՝ դանբանզան («դարպաս»), դանվան
(«ուղտ»), գրբրդանբռնբռն («երկբռնակ սղոց»), բռնզգռնլան
(«խլեզ»), փանոփանոն («թիթեռ») և այլն, ինչպես նաև՝ հռլ
(< ուլ) >, գռնլ (< գայլ), գանոնբ (< գառն), լռնզի (< լեզու),
հանբք (< երդ(իկ)), գժլ (< գալ), հռնշռնլ (< ոջիլ) և այլն.

Ռամիսի խոսվածք՝ գրբրդանբիլ («երկբռնակ
սղոց»), քանփլանբին («աքցան»), նանբանդ («պայտար»),
դանվանբան («հացի պահարան») և այլն, ինչպես նաև՝
անզգռնզ (< ընկույզ), լռնզոն (< լեզու), ծոնկոն (< ձուկն),
քռնթռնլ (< գդալ), կժրի (< գարի), հռնշանպ (< վիշապ),
պանբանկ (< բամբակ), պլլանիք՝ (< բանալի), ծրծանկ (<
որձակ («աքաղաղ») և այլն.

Փռանկայի խոսվածք՝ քանբան («աթար»), յանշանկ
(«ձեռնոց»), բանմոնզ («մաքուր»), քռնլլռնզ՝ («աղբանոց»),
քռնլանշ («ծղոտ») և այլն, ինչպես նաև՝ անզգռնզ (< ընկույզ),
ծոն (< ժամ («եկեղեցի»), ճռնբ (< ջուր), քռնբ (< քույր),

կնրռնք (< գարուն(ք), **կռլ** (< գայլ), **կօրի** (< գարի), **պօհ** (< քահ) և այլն:

Ինչպես նկատվեց, բոլոր խոսվածքներում բավական մեծ հաճախականությամբ գործում է ձայնավորների ներդաշնակության օրենքը՝ ոջիլ > **հոլջոլ**, դդում > **տոնդում**, գդալ > **քոլթոլ**, լեզու > **լոլզոլ** և այլն: Առավել կամ նվազ չափով ընդհանուր հատկանիշ է նաև բառավերջում՝ ձայնավորից և **ն** ձայնորդից հետո, **գ, կ, ք** հետևալեզվայինների քմայնացումը՝ **զմտիկ** (< գատիկ), **տանանկ** (< դանակ), **պըլանիք** (< բանալի), **ճիհնրանկ** (< ճախարակ), **օլնոք** (< ուլունք), **ժանգ** (< ժանգ), **թըրէք** (< թրիք), **սիֆտանկ** (< սպիտակ), **անք** (< էգ) և այլն: Այս հատկանիշը բնորոշ է նաև Ագուլիսի, Վանի, Խոյի, Մարաղայի բարբառներին:

Ուսումնասիրվող բոլոր խոսվածքներում բառասկզբի ձայնեղ պայթականների և պայթաշփականների դիմաց առկա են համապատասխան խուլեր: Ողոհիի խոսվածքում, սակայն, այս օրինաչափությունը գործում է մասնակիորեն. փոքր հաճախականությամբ ձայնեղների դիմաց առկա են խուլեր՝ զանգատ > **կանգանտ**, դանակ > **տենակ**, ջարդել > **ճնոթիլ**, բարակ > **պերակ**, ձմեռն > **ծըմեռն** և այլն, իսկ առավել մեծ հաճախականությամբ ձայնեղները պահպանվել են՝ քահ > **բէհ**, բան > **բէն**, բերել > **բերիլ**, դեղին > **դէլին**, գարուն > **գէրունք**, գալ > **գօլ**, ջուր

> **ջո՞ր** և այլն: Այս և համանման այլ երևույթներ (Աճառյանի օրենքից, ինչպես նաև հնչյունափոխության այլ օրենքներից շեղումներ) կարելի է բացատրել Ողոհիի խառը բնակչություն ունենալու հանգամանքով: Ինչպես հաստատում են նաև հայաստանաբնակ տարեց ողոհեցիները, գյուղում ապրել են ոչ միայն տեղաբնիկներ, այլև Մուծամբարից, Սալմաստից և Արցախ-Սյունիքից վերաբնակված հայեր²⁰: Այսուհանդերձ, հնարավոր ենք համարում նաև հիշյալ հատկանիշի ծագման տեղական վարկածը, քանի որ այն բնորոշ է նաև հարևան Մեղրու բարբառին (բահ > **բէհ**, բան > **բէն**, ձագ > **ձէգ**, ձախ > **ձէխ** և այլն)²¹:

Խոսվածքներում շեշտը վերջընթեր է՝ **հո՞ւ՛շնայ**, **պն՛մբնկ**, **պըլն՛նիք**, **օ՛րծնկ**, **տէ՛նակ**, **ճն՛ոթիլ** և այլն: Սակայն, այս օրինաչափությունից շեղվելով, շեշտն ընկնում է վերջնավանկի վրա նախավերջին վանկում գաղտնավանկ ունեցող բառերում՝ **կըծէ՛կ** < կծիկ, **կըրա՛կ** < կրակ, **փըռի՛լ** < փռել, **խըշխըշա՛լ** < խշխշալ այլն, ինչպես նաև սահմանափակ թվով այլ բառերում՝ **կաթղիկօ՛ւ** < կաթղիկոս, **ննչի՛** < առաջին և այլն:

Բոլոր խոսվածքներում ձայնավորների հնչյունափոխության օրինաչափությունները գրեթե նույնն են:

²⁰ **Հ. Աճառեան**, նշված աշխատանքը, էջ 8-9:

²¹ **Է. Աղայան**, նշված աշխատանքը, էջ 23-24:

Ոչ շեշտակիր ձայնավորի թուլացում՝ հեռանալ > **հրոնհանլ**, թեթևանալ > **թրթիվանհանլ**, գողանալ > **կրղաննալ** (Ռամ.), նեղանալ > **նրղանիլ**, լողանալ > **լրղանիլ** (Փառ.), նեղանալ > **նրղանիլ**, հեռանալ > **հրռանիլ** (Մսր.), գողանալ > **կրղանիլ**, նեղանալ > **նրղանիլ** (Բստ.) և այլն:

Շեշտակիր ա-ի դիմաց առկա է **օ (օ)**՝ ահ > **օհ**, աջ > **օջ**, թաթ > **թօթ**, տանձ > **տօնձ**, մարդ > **մօրթ** (Ռամ.), ափ > **օփ**, լաց > **լօց**, մագ > **մօգ**, տաշտ > **տօշտ** (Փառ.) և այլն:

Երևույթը բնորոշ չէ մյուս երեք խոսվածքներին:

Բառամիջի շեշտակիր **ռ**-ի դիմաց առկա է **ռ** (**ռ**)՝ ոջիլ > **հռիջնիլ** (Ռդհ.), խոզ > **խռուզ**, կոթ > **կռոթ**, լակոտ > **լակոտ**, խնձոր > **խրնձոր**||**խռնձոր** (Ռամ., Փառ.), ոջլոտ > **հռիջնիլոտ** (Մսր.), լակոտ > **լակոտ**, խաղող > **հաղող** (Բստ.) և այլն: Ի դեպ, այս հատկանիշը նույնպես խիստ բնորոշ է հարևան Մեղրու, Ագուլիսի և Արցախ-Սյունիքի բարբառներին:

Շեշտակիր **ռ**-ի դիմաց առկա է **օ (օ)**՝ թուխս > **թօխս**, կուժ > **կօժ**, փուշ > **փօշ**, քուն > **քօն** (Ռամ.), թուփ > **թօփ**, ուր > **օր**, սուր > **սօր**, քուն > **քօն** (Բստ.), կուզ > **կօզ**, ծուռ > **ծօռ** (Մսր.), ուտել > **օտիլ**, ուրիշ > **օրիշ** (Փառ.), սուտ > **սօտ** (Ռդհ.) և այլն: Նշենք, որ այս հատկանիշը նույնպես խիստ բնորոշ է վերոհիշյալ բարբառներին:

Միավանկ և երկվանկ բառերում բառասկզբի **ե**-ի դիմաց հաճախ առկա է **ի**՝ եզն > **իզնի**||**իզնը**, երբ > **իփ**, երդ

> **(հ)իրթ**, երևալ > **իրիվալ**, երեք > **իրիք**, երեկ > **հիրկի**||**հիրկե** (Ռամ., Փառ.), ելանել > **իլնիլ**, երեք > **իրիք**||**իրեք**, երես > **իրես**, երևալ > **իրվալ**, եփել > **իփիլ** (Մսր., Բստ.), ես > **իս**, երես > **իրիս**, աւելուկ > **իվլուկ**, եփել > **իփել** (Ողհ.) և այլն: Բառամիջի շեշտակիր **ե**-ի դիմաց նույնպես առկա է **ի**՝, թեփ > **թիփ**, խելք > **խիլք**, արև > **արիվ** (Ռամ., Փառ.), թել > **թիլ**, հեշտ > **հիշտ**, չեչ > **չիչ** (Մսր.), աւել > **ավիլ**, աւելի > **իվիլ**, տերև > **տիրելվ**, շերեփ > **շիրեփ** (Բստ.) և այլն:

Հիշյալ բոլոր խոսվածքներում, բարբառային հնագույն տարբերակներ համարվող մի շարք բառերում²², բառակցքում **բ**-ին կամ **դ**-ին նախորդող **ե**-ի դիմաց առկա է **ա** (**յ**) հնչյունը՝ եղբայր > **ախապար**||**յախապար**||**ախպեր**, երագ > **արագ**, երեսուն > **արասուն**, երկաթ > **արկաթ**, երկան(ք)>**արկանք**, երկաթ > **արկաթ**, եղիճ > **աղինջ**||**հաղինջ** և այլն:

Խոսվածքների որոշ բառերում հին հայերենի **ե**-ի դիմաց առկա է **ա** (**յ**)՝ ամեն > **աման**, առնետ > **առնատ**, թե > **թյ**, էգ > **յք**, խլեգ > **խըլագ**, մեջք > **մաշկ**, տեր > **տար** (Ռամ.), առնետ > **առնատ**, էգ > **աք**, պահեգ > **պըհագ**, տեր > **տյր** (Փառ.), ամեն > **ամման**, թե > **թյ** (Բստ.) և այլն:

²² **Է. Աղայան**, Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում - *ՀԽՄՀ ԳԱ հասարակական գիտությունների տեղեկագիր*, Ե., թիվ 5, 1958, էջ 67-80:

Բոլոր խոսվածքներում շեշտակիր **ի**-ի դիմաց բավական մեծ հաճախականությամբ առկա է **է՝ թի > թէ**, կնիկ > **կընէկ**, ծիծ > **ծէծ**, միս > **մէս**, պինդ > **պէնդ**, սիրտ > **սէրտ**, տիկ > **տէկ**, ցից > **ցէց**, թրիք > **թըրէք**, ծիտ > **ծէտ**, կծիկ > **կըծէկ**, միտք > **մէտկ(ը)**, հինգ > **հէնգ** և այլն:

Խոսվածքներին բնորոշ է նաև ձայնավորների ներդաշնակությամբ գաղտնավանկի լիաձայնությունը՝ կճուճ > **կրճճուճ**, ձուկն > **ծուկուն**, կկու > **կուկու** (Մսր.), կճուճ > **կրճճուճ**, բրինձ > **պիրինձ**, սրբել > **սիրփիլ** (Ռամ.), սունկն > **սունգուն**, փշուր > **փռշուր** (Փառ.), բլիթ > **պլիլթ**, ձուկն > **ծուկուն** (Բստ., Ողհ.) և այլն:

Հին հայերենի շեշտակիր **այ** երկբարբառի դիմաց Ռամիսի խոսվածքում՝ առավել մեծ, Փառակայի խոսվածքում՝ նվազ հաճախականությամբ առկա է **ա** պարզ ձայնավորը՝ այծ > **ած**, այս, այդ, այն > **աս, ատ, ան**, հայր, մայր > **հար, մար**, ծայր > **ծար**, փայտ > **փատ** (Ռամ.), լայն > **լան**, տայգր > **տանքիր**, այլ > **ալ** (Փառ.) և այլն: Մյուս խոսվածքներում, սակավաթիվ բացառություններով հանդերձ, առկա է արևելահայ բարբառներին առավել բնորոշ **այ > է** հնչյունափոխությունը՝ այծ > **էծ**, այս, այդ, այն > **ես, էդ, էն** (Ողհ.), հայր, մայր > **հեր, մեր**, փայտ > **փեղ** (Բստ.), լայն > **լեն**, ծայր > **ծեր**, կայծ > **կէծ** (Մսր.) և այլն:

Մի խումբ բառերում հին հայերենի **աւ** երկբարբառի դիմաց առկա է **օխ** հնչյունակապակցությունը՝ աւձ > **օխց** (Ողհ., Փառ.), **օխցը** (Մսր.), **օղուծ**

(սեռ.՝ **օխցի**, Ռամ.), եալթն > **օխսը** (Փառ., Բստ., Մսր., Ողհ.), **էխսը** (Ռամ.) և այլն:

Հին հայերենի **ոյ** երկբարբառի դիմաց առկա է **ու** (**ու**) ձայնավորը՝ բոյթ > **պութ**, կապոյտ > **կամպուտ**, ընկոյզ > **անգուզ**, , ոյժ > **ուժ**, քոյր > **քուր** (Ռամ., Փառ.), շոյտ > **շուտ**, լոյս > **լուս**, քոյր > **քուր** (Մսր.), բոյն > **պուն**, թոյլ > **թուլ**, լոյս > **լուս** (Ողհ.), բայց՝ քոյր > **քիր**, լոյս > **լիս**, ընկոյզ > **անգիզ** (Բստ.) և այլն:

Հին հայերենի **եա** երկբարբառի դիմաց հիմնականում առկա է **ա** (**ա**) ձայնավորը՝ կորեակ > **կորակ**, ցորեան > **ցորան** (Ռամ., Մսր., Բստ.), երանեակ > **հըրէնակ**, ցորեան > **ցօրան** (Փառ.), հոգնակի ձևերում՝ **առչար**, **մագար**||**մօզար**, **քարար**, **օրար**, բայական ձևերում՝ **էփալ ա** (< էփել է), **խաշալ ա** (< խաշել է), **ծէ՛փա** (< ծեփի՛ր), **խա՛շա** (< խաշի՛ր), **է՛փա** (< էփի՛ր) և այլն:

Որպես կանոն, հին հայերենի **իւ** երկբարբառի դիմաց խոսվածքներում առկա է **ու** (**ու**)՝ ալիւր > **անլուր**, աղբիւր > **անխպուր** (Ռամ., Փառ., Մսր., Բստ., Ողհ.), արիւն > **արուն**, հարիւր > **հօրուր** (Ռամ.), ձիւն > **ձուն**, սիւն > **սուն** (Ռամ., Փառ., Մսր.) և այլն: Կան նաև փոքրաթիվ շեղումներ՝ ալիւր > **անլիր**, արիւն > **արին** (Բստ.) և այլն:

Միջձայնավորային և բառավերջի հետձայնավորային, ինչպես նաև **ր**-ին հաջորդող դիրքերում ձայնեղ պայթականները և պայթաշփականները վերածվում են

համապատասխան շնչեղ խուլերի (ք, գ, դ, ձ, ջ > **փ, ք, թ, ց, ջ**)՝ ազանիլ > **հնփնիլ**, գոգ > **կոփք**, էգ > **նփ**, որձ > **ուրց**, խաբել > **խնփիլ**, արջ > **օրջ**, բարձ > **պօրց**, կարդալ > **կնրթիլ**, ուրբաթ > **օրփնթ** (Ռամ., Փառ.), կարդալ > **կարթիլ**, մրջին > **բրջեն**, բարձ > պերց (Մսր.), հաջել > **հնջիլ**, որձ > **վերց**, սրբել > **սիրփիլ** (Բստ.), թագաւոր > **թաքաւոր**, բարձր > **պէցուր** (Ողհ.) և այլն:

Խոսվածքներին խիստ բնորոշ է նաև բառասկզբի **խ-ի**՝ տարնմանական հնչյունափոխությամբ **հ-ի** վերածվելու երևույթը (**հ** > **խ**)՝ խաղ > **հաղ**, խաղաղ > **հաղաղ**, խաղող > **հաղու**, խեղդել > **հեխտիլ** (Ռամ., Փառ.), խաղող > **հաղոյ**, խաղալ > **հաղալ**, խաղացնել > **հաղացընիլ** (Մսր.), խաղող > **հաղուղ** (Բստ.), **հավօղ** (Ողհ.) և այլն: Ինչպես նկատվեց, թեև **խաղող** բառանունը տարբեր բնակավայրերի խոսվածքներում տարբեր հնչատարբերակներով է դրսևորվում (**հաղոյ**, **հաղուղ**, **հաղու**, **հավօղ**), այդուհանդերձ բոլոր խոսվածքներում ակնհայտ է հնչյունափոխական միևնույն երևույթը:

Գրաբարի բառավերջում **ն** և նախորդող այլ բաղաձայն ունեցող բառերում հիմնականում նկատվում է **ն-ի** պահպանում՝ գաղտնավանկ **ը-ի** դրափոխությամբ՝ ակն > **օկնը**, թոռն > **թօնը**, կամն > **կումնը**, կուռն > **կօնը**, նուռն > **նօնը**, որդն > **օռնը** (Ռամ.), ամառն > **ամառնը**, դառն > **տօռնը**, որդն > **ռօռնը**, սառն > **սօնը** (Փառ.), դառն > **տէռնը**, խառն > **խառնը**, որդն > **վօռնը** (Մսր.), դառն >

տանոնը, կամն > **կամնը**, ծունկն > **ծոնգնը** (Բստ.) և այլն:
 Սակավ դեպքերում առկա են նաև **ն**-ի անկում՝
 գաղտնավանկի պահպանմամբ՝ սերմն > **սիրմը**, ինն >
այնը (Ռամ.), տասն > **տասսը** (Փառ.), տասն > **տասը**
 (Մսր.), **ն**-ի պահպանում՝ գաղտնավանկի լիաձայնու-
 թյամբ՝ ձուկն > **ձուկոն** (Ռամ.), մուկն > **մոկուն**, կամն >
կումուն (Փառ.), ձուկն > **ծիկուն**, մուկն > **մոկուն** (Ողհ.),
 ինչպես նաև **ն**-ի պարզ անկում՝ խուփն > **խուփ**, ծունկն >
ծունգ, հարսն > **հոռս** (Ռամ.), դադն > **տախց**, մութն > **մօթ**,
 երդումն > **նրթոն** (Փառ.), թոռն > **թօռ**, սերմն > **սերմ**
 (Մսր.), հարսն > **հարս**, ամառն > **ամառ** (Բստ.) և այլն:

Մի շարք բառերում բառավերջի **նր** հնչյունա-
 կապակցության մեջ հավելվում է **դ** հնչյունը՝ ծանր >
ծունդրը, ծունր > **ծունդուր**, մանր > **մունդուր** (Ռամ.,
 Փառ.), ծանր > **ծանդրը**, ծունր > **ծունդըր**, (Բստ., Մսր.),
 նաև՝ պանիր > **պանդիր** (Ռամ.) և այլն: Համանման ձևով
 նկատվում է նաև **բ**-ի հավելում **մր** հնչյունակա-
 պակցությամբ որոշ բառերում՝ համարել > **համբրիլ**, օմր
 > **ըմբոն** (Ռամ.), համարել > **հըմբարիլ**, զմուռս > **զըմբըռ**,
 օմր > **նմբոն** (Փառ.), համարք > **հմմբնրք**, օմր > **օմբոն**
 (Մսր.), զմուռս > **զըմբեռնը**, համարք > **համբնրք** (Բստ.) և
 այլն:

Բառասկզբի ձայնավորից առաջ **հ**-ի հավելում՝
 ալեւոր > **հըլնվոնր**, ընկեր > **հինգիր**, ոլորել > **հըլօրիլ**
 (Ռամ.), ազի > **հնքոն**, արբենալ > **հնրփիլ**, երինջ > **հերինջ**

(Փառ.), ուլունք > **հոլլոնք**, ոջիլ > **հոլլոլ**, ոլորել > **հոլլօրիլ**
(Մար.), ով > **հոլվ**, ուլ > **հօլ**, ոջիլ > **հոլլոլ** (Ողհ.), ուլունք >
հօլլոնք, ընտրել > **հրնդրիլ** (Բստ.) և այլն:

Օտար բառերի **ֆ**-ի դիմաց բոլոր խոսվածքներում
առկա է **փ`** ֆանդ > **փանդ**, ֆահմ > **փահմ**, ֆաստն >
փաստն, ֆանար > **փաննար**, ֆերմա > **փերմա**, Ֆրանսիա >
Փրանսյա, Ֆարմա > **Փարմա** և այլն:

Օտար բառերի բառասկզբի **դ**-ի դիմաց բոլոր
խոսվածքներում առկա է **դ** շփական՝ **դազան**, **դալմադալ**,
դասաբ, **դանրիբ**, **դօշ**, **դօնադ**, **դուշ**, **դուրթի** և այլն:

Ներկայացված հատկանիշները, ինչպես նաև
տարածաշրջանի բարբառներին բնորոշ ընդհանուր այլ
հատկանիշներ վկայում են, որ հնչյունաբանության տե-
սանկյունից խոսվածքների այս խումբը, իրոք, ներկա-
յացնում է լեզվական բավական սերտ առնչություն²³:

Ինչպես վերը նշեցինք, Հյուսիսային Գողթնի խոս-
վածքների հանդեպ կիրառել ենք նաև Գ. Ջահուկյանի
բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը²⁴ (հավել-
վածի Աղյուսակ 1): Աղյուսակի առաջին 50 կետերի՝

²³ **Ա. Վարդանյան**, Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչյու-
նական առանձնահատկությունները - «Հայոց լեզվի պատմա-
կան ուսումնասիրության արդի խնդիրներ» գիտաժողովի նյու-
թեր, Ե., 2019, էջ 199-208:

²⁴ **Գ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Ե.,
1972, էջ 45-119:

հնչյունաբանական հատկանիշների արդյունքներով հիշյալ խոսվածքները միմյանցից տարբերվում են նվազագույնը՝ 3 և առավելագույնը՝ 6,5 միավորով (Աղյուսակ 3): Հատկանիշների տարբերությունների նման ցածր մակարդակը ևս վկայում է, որ հնչյունաբանության առումով Հյուսիսային Գողթնի խոսվածքները կարող են դիտվել որպես մեկ բարբառային միավոր՝ միևնույն բարբառի կամ միջբարբառի խոսվածքներ:

Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչյունաբանական հատկանիշների ներքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բնակավայր	Բիստ	Մեսրոպական	Ողոհի	Ռամիս	Փառակա
Բիստ	—	5	6,5	6	5
Մեսրոպական	5	—	4,5	6	3
Ողոհի	6,5	4,5	—	4,5	4,5
Ռամիս	6	6	4,5	—	3
Փառակա	5	3	4,5	3	—

**ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԳՈՂԹՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ
ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Նպատակ ունենալով ճշտելու Հյուսիսային Գողթ-
նի հիշյալ բնակավայրերի խոսվածքների մերձավորու-
թյունը նաև ձևաբանական հատկանիշների առումով,
կատարել ենք ոչ միայն խոսվածքների ձևաբանական
հատկանիշների համեմատական քննություն, այլև կրկին
կիրառել ենք Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասա-
կարգման սկզբունքը:

Նախ անդրադառնանք խոսվածքների ձևաբանա-
կան ընդհանուր հատկանիշներին և առանձնահատկու-
թյուններին:

Բազմավանկ բառերի հոգնակին բոլոր խոսվածք-
ներում հիմնականում կազմվում է **նէր** հոգնակերտ
մասնիկով՝ **անխաղձ-անխաղձներ, կաքավ-կաքավներ,
վօսկըռ-վօսկըռներ** (Մար.), **տանակ-տանակներ**, **մօծակ-
մօծակներ**, **քըշիր-քըշիրներ** (Ռամ.) **ճնդաց-ճնդացներ**,
իրիս-իրիսներ, **թիփըռ-թիփըռներ** (Փառ.) և այլն: Բիս-
տի խոսվածքում, սակայն, կիրառական է **նի** մասնիկը՝
խընձօր-խընձօրնի, **տանակ-տանակնի**, **մօծակ-մօծակ-**

նի, իսկ Ողոհիի խոսվածքում զուգահեռաբար գործածվում են **նի** և **ներ** մասնիկները՝ **ծօկուն-ծօկուններ**, աստըղ-**աստըղներ**, բայց՝ **կեծակ-կեծակնի**:

Ձայնավորով վերջացող բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է հիմնականում **ք** մասնիկով՝ խընամի-խընամիք, ըխա-**ըխեք**, կնթան-**կնթեք** (Բստ.), վօրթի-**վօրթիք**, ըրխա-**ըրխեք** (Մսր.), խօխա-**խօխեք** (Ողհ.) **քէնի-քէնիք**, ըխա-**ըխաք**, ճօրի-**ճօրիք** (Ռամ.), հնքնի-**հնքնիք**, գնլբն-**գնլբնք**, սըտանա-**սըտանաք** (Փառ.) և այլն: Մեարտավանի խոսվածքում, սակայն, կիրառական է նաև **ներ** մասնիկը՝ կինի-**կինիներ**, մըտանի-**մըտանիներ**, փէսացու-**փէսացուներ**:

Միավանկ բառերի հոգնակին կազմվում է հիմնականում **եր (ար)** մասնիկով՝ ճո՛ր-**ճո՛րեր**||**ճր՛րեր**, տօն-**տըներ**, մէս-**մըսեր** (Բստ.), կ'օղ-**կ'օղեր**, հավ-**հավեր**, պերց-**պերցեր** (Մսր.), ած-**ածար**, օռչ-**առչար**, կ'նիլ-**կ'նիլար** (Ռամ.), ճո՛ր-**ճո՛րանք**, ծառ-**ծըռար**, պօհ-**պօհանք** (Փառ.) և այլն:

Հին հայերենի **ն**-ով և նախորդով այլ բաղաձայնով վերջացող բառերի հոգնակին կազմվում է **եր (ար)** հոգնակերտով՝ **ն**-ի պահպանմամբ՝ կամնը-**կամներ**, կօնը-**կըռներ**, տօնը-**տըռներ** (Բստ.), պէռնը-**պէռներ**, կ'օնը-**կ'օռներ**, թօնը-**թօռներ** (Մսր.), ծիկուն-**ծիկուններ**, մօկուն-**մօկուններ** (Ողհ.), իգնը-**իգնանք**, թօնը-**թօռար**,

օռթնը-**օռթնսն** (Ռամ.), իզնը-**իզնար**, նօռնը-**նըռնար**,
նիրթնը-**նիրթնար** (Փառ.) և այլն:

Հոլովման համակարգում հիմնականում դրսևորվում են բավական սերտ ընդհանրություններ.

Ազգակցություն ցույց տվող բառերը հոլովվում են ներքին **ռ (ռւ)** հոլովմամբ՝ անէր-**անօր**, տէքըր-**տէքօր**, քիր-**քըվօր** (Բստ.), հանէր-**հանօր**, քուր-**քըվօր** (Մսր.), տէքըր-**տէքուր**, անէր-**անուր**, (Ռամ.), անխաւս-**անխաւսուր**, անհիր-**անուր** (Փառ.) և այլն:

Հին հայերենի բառավերջում **ն** և նախորդող բաղաձայն ունեցող միավանկ բառերը հոլովվում են **ի** և **ան** հոլովիչներով, Ռամիսի և Փառակայի խոսվածքներում, սակայն, առկա են միայն **ի** հոլովման օրինակներ՝ պէռնը-**պէռնի**, նօռնը-**նըռնի**, յէզնը-**յէզան**, տոռը-**տըռան** (Բստ.), ծօկըն-**ծօկնի**, կաթնը-**կաթնի**, կ'օռնը-**կ'օռան**, տոռնը-**տըռանն** (Մսր.), գօռնը-**գօռնի**, իզնը-**իզնի**, նօռնը-**նօռնի** (Ռամ.), կօթնը-**կօթնի**, կօռնը-**կօռնի**, մօկուն-**մօկունի** (Փառ.) և այլն:

Բոլոր խոսվածքներում գոյականը հոգնակի թվում հոլովվում է **ի** հոլովմամբ՝ պէրաննի-**պէրաննէրի**, տաննակնի-**տաննակների** (Բստ.), պէրցէր-**պէրցէրի**, կ'օղէր-**կ'օղէրի** (Մսր.), ծուկուններ-**ծուկունների**, աստըղներ-**աստըղների** (Ողհ.), ուսկոռներ-**ուսկոռներին**, պօրցէր-**պօրցէրին** (Ռամ.), կօվար-**կօվէրի**, ճիրսն-**ճիրէրի** (Փառ.) և այլն:

Բացառական հոլովը արտահայտվում է ինչպես **ից** վերջավորությամբ (ինչպես հարևան Ագուլիսի բարբառում), այնպես էլ **ան(ի), էն** վերջավորությամբ (ինչպես հարևան Արցախ-Սյունիքի բարբառում). **պիրան-պիրանից, կիլ-կիլից, լո՛ւգո՛ւ-լո՛ւգվից** (Բստ.), **աղվես-աղվեսան,** **կո՛ւլ-կո՛ւլան,** **ախպեր-ախպորան||ախպուրը անի** (Մսր.), **բո՛ւն-բո՛ւնից||բո՛ւնէն,** **մաչ-մաչից||մաչէն,** **արել-արըվից||արըվէն** (Ողհ.) **պիրան-պիրանից, կո՛ւլ-կո՛ւլից, սար-սարից** (Ռամ.), **էշ-էշան||էշին անի,** **հոց-հիցան||հոցի(ն) անի,** **քինթ-քինթան||քինթին անի** (Փառ.) և այլն: Ինչպես նկատվեց, Ողոհիի խոսվածքում **ից** և **էն** վերջավորությունները զուգահեռ կիրառական են. փաստ, որը կրկին հաստատում է գյուղի խառը բնակչության մասին:

Գործիական հոլովը հիմնականում արտահայտվում է **ով** հոլովական վերջավորության **ավ** հնչյունական տարբերակով, միայն Փառակայի խոսվածքում առկա է **ով** տարբերակը. **լո՛ւգո՛ւ-լո՛ւգվավ,** **քար-քարավ,** **ծով-ծովավ** (Բստ.), **մարթ-մարթավ,** **քուր-քըվօրավ,** **հաց-հացավ** (Մսր.), **աման-ամանավ,** **տուն-տընավ** (Ողհ.), **նվիլ-նվիլլավ,** **լո՛ւգո՛ւ-լո՛ւգվնվ,** **կօհնը-կօհնավ** (Ռամ.), **ամիս-ամսով,** **տարի-տարով,** **կօթնը-կօթնով||կաթնով** (Փառ.) և այլն:

Ներգոյական հոլովը ընդհանուր առմամբ արտահայտվում է **ում** վերջավորությամբ կամ նրա **ըմ** հնչյունական տարբերակով՝ **աշխարք-աշխարքըմ,** **կէղ-կէղըմ,** **կո՛ւճո՛ւճ-կո՛ւճո՛ւճում** (Բստ.), **փօր-փօրըմ,** **կո՛ւճո՛ւճ-**

կրօճոճում, տաշտ-տաշտում (Մսր.), յերգիր-յերգիրում, յերգինք-յերգինքում (Ողհ.), պիրան-պիրանում, հուղ-հուղում, ուրուրուց-ուրուրուցում (Ռամ.), տօշտ-տօշտում, պիրան-պիրանում||պիրանում, աշխարք-աշխարքում||ըշխարքում (Փառ.) և այլն:

Անձնական դերանունների բացառական և գործիական հոլովները կազմվում են տրականից՝ ինձանից, քեզանից, ուրէն նանից, մեզնալ, ծեզնալ, ուրանցնալ (Բստ.), ինձանի, քեզանի, ուրան նանից, մեզանալ, ծեզանալ, ուրանցնալ (Մսր.), ինձանից, քիզանից, նրօնից, միզանալ, ծիզանալ, նրոցանալ (Ռամ.), ինձանից, քեզանից, ուրէն նանից, մեզնալ, ծեզնալ, ուրանցնալ (Փառ.):

Ցուցական դերանունները արտահայտվում են այս, այդ, այն ձևերով, միայն Ռամիսի խոսվածքում Ագուլիսի բարբառի նման միաժամանակ առկա են նաև սա, դա, նա ձևերը՝ էս, էտ, էն (Բստ., Մսր., Ողհ.), աս, ատ, ան (Փառ.), աս, ատ, ան||սօ, տօ, նօ (Ռամ.): Մեռական-տրական հոլովը արտահայտվում է հին հայերենի սորա, դորա, նորա տիպի հիմքով՝ ըստրան, ըտրան, ընդրան, ըստրանց, ըտրանց, ընդրանց (Բստ.), ուստուր, ուտուր, ունդուր, ուստուց, ուտուց, ունդուց (Մսր.), սըրօ(ն), տըրօ(ն), նըրօ(ն), սըրունց, տըրունց, նըրունց (Ռամ.), ըստուն, ըտուն, ընդուն, ըստուց, ըտուց, ընդուց (Ողհ.),

ուստուրա||ըստուրա, ունդուրա||ընդուրա, տուրա, ուս-
տուցա||ըստուցա, ունդուցա||ընդուցա, տուցա (Փառ.):
Բացառական և գործիական հոլովները կազմվում են
սեռականի հիմքից՝ ըստրանից, ըտրանից, ընդրանից,
ըստրանցից, ըտրանցավ (Բստ.), ուստո՞ւր անի, ուտո՞ւր
անի, ունդո՞ւր անի, ուստո՞ց անի, ուտո՞ց անանվ (Մսր.), սըրո
անի, տըրո անի, նըրո անի, սըրունց անի, տըրունց անավ
(Ռամ.), ըստրանից, ըտրանից, ընդրանից, ըստրանցից,
ըստրանցավ (Ողհ.), ուստուրանից||ըստուրանից,
ունդուրանից||ընդուրանից, տուրանից, ուստու-
ցանից||ըստուցանից, ունդուցանօվ||ընդուցանօվ (Փառ.):

Խոնարհման համակարգում նույնպես, որոշակի
տարբերություններով հանդերձ, խոսվածքները հիմնա-
կանում դրսևորում են ընդհանուր հատկանիշներ:

Սահմանական եղանակի ներկա ժամանակը
արտահայտվում է անկատար դերբայով (կազմվում է ում
վերջավորությամբ կամ նրա ըմ հնչյունական տարբերա-
կով) և օժանդակ բայի ներկայի ձևերով՝ կի՛րըմ ըմ (ըս, ա,
ընք, ըք, ըն) (Բստ., Մսր., Ողհ.), կի՛րո՞ւմ ըմ (ըս, ա, ըք, ըք,
ըն) (Ռամ.), կի՛րիմ իմ (իս, ան, իք, իք, ին) (Փառ.):

Անցյալ անկատար ժամանակը ձևավորվում է
անկատար կամ համակատար դերբայով, օժանդակ բայի
ներկայի ձևերով և լինե՛լ բայի ամփոփված ձևեր հան-
դիսացող էլ, նէլ կամ նան՛լ մասնիկով՝ խըսըմ (մընալիս) ըմ
(ըս, –, ընք, ըք, ըն) էլ (Բստ.), խըսըմ (մընըմ) ըմ (ըս, ա, ընք,

ըք, ըն) էլ (Մսր.), խըսելիս (մընալիս) ըմ (ըս, ան, **ըք, ըք, ըն**)
նէլ (Ռամ.), խըսըմ (մընայիս) ըմ (ըս, -, **ըք, ըք, ըն**) անն
(Փառ.):

Սահմանական եղանակի ապառնի ժամանակը
դրսևորվում է ապառնի դերբայով և օժանդակ բայի
խոնարհված ձևով՝ **օտօլու (մընալու) վըմ (վըս, վա, վընք,
վըք, վըն)** (Բստ.), **օտօլ (մընալ) ըմ (ըս, վա, ընք, ըք, ըն),
մընալ ում (ուս, վա, ունք, ուք, ան)** (Մսր.), **ուտիլ ում (իս,
ա, իք, իք, ին), մընալ ում (ուս, ա, ուք, ուք, ուն)** (Ռամ.),
**օտիլու վըմ (վըս, վա, վըք, վըք, վըն), մընալու ում (ուս, վա,
վըք, վըք, վըն)** (Փառ.):

Սահմանական եղանակի անցյալ կատարյալը
կազմվում է պարզ և (կամ) բաղադրյալ ձևով՝ **խըմամ
(մընահամ, հասամ, մըռահամ) (-ար, -ավ, -անք, -աք, -ան)**
(Բստ., Մսր.), **խըմալ ըմ (ըս, ա, ըք, ըք, ըն), մընահամ,
հասամ, մըռահամ (աս, ավ, աք, աք, ան)** (Ռամ.), **խըմալ
(մընահալ, հասալ, մըռահալ) ըմ (ըս, ա, ըք, ըք, ըն) ||
խըմամ (մընահամ, հասամ, մըռահամ) (աս, ավ, աք, աք,
ան)** (Փառ.): Ի դեպ, Փառակայի խոսվածքում նկատվող
պարզ և բաղադրյալ ժամանակաձևերի այս զուգահեռ
կիրառությունը նկատել և ուսումնասիրել է Գայանե
Գևորգյանը²⁵: Սարգիս Սարգսյանցը պարզ ձևերը դիտել

²⁵ **Գ. Գևորգյան**, Քերականական համանիշության դրսևո-
րումները հայերենի բարբառների բայի անցյալ ժամանա-
կաձևերում - *«Ձահուկյանական ընթերցումներ» հանրապե-
տական գիտական նստաշրջանի զեկուցումներ*, Ե., 2013, էջ 166:

Է որպես բաղադրյալ ձևերից 1 ձայնորդի անկմամբ առաջացած ամփոփ ձևեր՝ **թակալ ըմ > թակամ, թակալ ըս > թակաս, թակալ ըք > թակաք** և այլն²⁶։ Անդրադառնալով անցյալ կատարյալի պարզ և բաղադրյալ ժամանակաձևերի գուգահեռ կիրառությանը՝ Գ. Գևորգյանը կարծում է, որ նախապես, երբ բարբառների հնչյունական և ձևաբանական հատկանիշները դեռ նոր էին ձևավորվում, անցյալ կատարյալի պարզ կազմությամբ ժամանակաձևերն ընդգրկել են հայերենի ողջ տարածքը։ Հետագայում միայն՝ հին շրջանում գոյություն ունեցող բարբառային տարբերությունների խորացմանը զուգընթաց, հայերենի տարածքային տարբերակները անցյալ կատարյալի իմաստն արտահայտել են մեկ այլ կառուցատիպով՝ վաղակատար դերբայով և օժանդակ բայով հարադրված²⁷։

Վաղակատար ժամանակը դրսևորվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի խոնարհված ձևով, անցյալ վաղակատարը՝ նաև **էլ, նէլ** կամ **նալ** մասնիկներից որևէ մեկով՝ **կիիրած ըմ (ըս, ա, ընք, ըք, ըն), կիիրած ըմ (ըս, –, ընք, ըք, ըն) էլ (Բստ.), կիիրած ըմ (ըս, ան, ընք, ըք, ըն), կիիրած ըմ (ըս, ան, ընք, ըք, ըն) էր (Մսր.), կիրօծ ում (ուս, ա, ըք, ըք, ըն), կիրօծ ում (ուս, ա, ըք, ըք, ըն) նէլ**

²⁶ Մ. Սարգսեանց, նշված աշխատանքը, էջ 116։

²⁷ Գ. Գևորգյան, նշված աշխատանքը, էջ 166-167։

(Ռամ.), կիրանձ ըմ (ըս, ա, ըք, ըք, ըն), կիրանձ ըմ (ըս, -, ըք, ըք, ըն) ննլ (Փառ.):

Ըղձական եղանակի անցյալ ապառնին արտահայտվում է հին հայերենի անցյալ անկատարի տիպի բայաձևերով և էլ, նեղ կամ ննլ մասնիկներից որևէ մեկով՝ կիրիմ էլ, կիրիս էլ, կիրեր, կիրինք էլ, կիրիք էլ, կիրին էլ, մընամ էլ, մընաս էլ, մընար, մընանք էլ, մընաք էլ, մընան էլ (Բստ., Մսր.), կիրիմ նեղ, կիրիս նեղ, կիրեր նեղ, կիրինք նեղ, կիրիք նեղ, կիրին նեղ, մընում նեղ, մընուս նեղ, մընոր ննլ, մընոնք նեղ, մընօք նեղ, մընօն նեղ (Ռամ.), կիրիմ ննլ, կիրիս ննլ, կիրեր ննլ, կիրինք ննլ, կիրիք ննլ, կիրին ննլ, մընում ննլ, մընուս ննլ, մընոր ննլ, մընօնք ննլ, մընօք ննլ, մընօն ննլ (Ռամ.):

Պայմանական եղանակը Ռամիսի և Փառակայի խոսվածքներում ձևավորվում է դերբայով և օժանդակ բայի ժամանակային ձևերով, իսկ Բիստի, Մեսրոպավանի և Ողոհիի խոսվածքներում՝ ըղձական եղանակի բայաձևերով և կը եղանակիչով՝ կիրիլ իմ (իս, ա, իք, իք, ին), մընօլ ում (ուս, ա, ուք, ուք, ուն) (Ռամ.), կիրիլ իմ (իս, ա, իք, իք, ին), մընօլ ըմ (ըս, ա, ըք, ըք, ըն) (Փառ.), կիրիլիմ (-իս, -ի, -ինք, -իք, -ին), կըմընամ (աս, -ա, -անք, -աք, -ան) (Բստ., Մսր., Ողհ.): Անցյալ ժամանակը՝ ասիլ իմ (իս, ա, իք, իք, ին) նեղ (Ռամ.), ասիլ ըմ (ըս, -, ըք, ըք, ըն) ննլ (Փառ.), կասիմ էլ, կասիս էլ, կասեր, կասինք էլ, կասիք էլ, կասին էր (Բստ., Մսր., Ողհ.):

Բոլոր խոսվածքներում հարկադրական եղանակը արտահայտվում է **պիտի** եղանակիչի կամ նրա հնչյունական տարբերակի և խոնարհվող բայի ըղձական եղանակի ժամանակաձևերի համադրությամբ՝ **պետի (պետկ ա) կիրիմ (-իս, -ի, -ի(ն)ք, -իք, -ին) (Բստ., Մսր., Փառ., Ողհ.), մետիլ և կիրիմ (-իս, -ի, -իք, -իք, -ին) (Ռամ.):** Անցյալ ժամանակը՝ **պետի (պետկ ա) կիրիմ (-իս, -, ինք, -իք, -ին) եր (ել) (Բստ., Մսր., Ողհ.), մետիլ և կիրիմ (-իս, -ի, -իք, -իք, -ին) նել (Ռամ.), պետի (պետկ ա) կիրիլ իմ (իս, -, իք, իք, ին) նալ (Փառ.):**

Որոշակի տարբերություններով հանդերձ՝ խոսվածքները ընդհանուր հատկանիշներ են դրսևորում նաև ժխտական խոնարհման դեպքում: Օրինակ, սահմանական եղանակի ներկա ժամանակի ժխտական խոնարհումը (անկատար դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով)՝ **սերում (սիրում) չիմ (չիս, չի, չի(ն)ք, չիք, չին) (Բստ., Մսր., Ողհ., Փառ.), սերում չիմ (չիս, չի, չիք, չիք, չին) (Ռամ.),** բոլոր խոսվածքներում կազմվում է գրեթե միանման, իսկ հարկադրական եղանակի ժխտական խոնարհման դեպքում չ մասնիկը գործածվում է ինչպես անկախ, այնպես էլ բայաձևերին զուգակցված՝ **պետի կիրիմ (-իս, -ի, -ինք, -իք, -ին) վեչ (ել) (Բստ., Ողհ.), պետկ ա կիրիլ չիմ (-չիս, -չինք, -չիք, -չին) (եր) (Մսր.), մետիլ և չրկիրիմ (-իս, -ի, -իք, -իք, -ին) (նել) (Ռամ.), պետի կիրի(լ) չիմ (չիս, չի, չիք, չիք, չին) նալ (Փառ.):**

Վերոհիշյալ հատկանիշները, ինչպես նաև տարածաշրջանի բարբառներին բնորոշ ձևաբանական ընդհանուր այլ հատկանիշներ վկայում են, որ այս բնականայրերի խոսվածքները ձևաբանության տեսանկյունից նույնպես ներկայացնում են լեզվական բավական սերտ առնչություն²⁸:

Ինչպես վերը նշվեց, Գողթնի հյուսիսային գյուղերի խոսվածքների հանդեպ կիրառել ենք նաև Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը: Աղյուսակի առաջին 50 կետերի՝ հնչունաբանական հատկանիշների արդյունքներով հիշյալ խոսվածքները միմյանցից տարբերվում են նվազագույնը՝ 3 և առավելագույնը՝ 6,5 միավորով:

Պարզվում է, որ խոսվածքները միմյանց նկատմամբ առավել նվազ տարբերություններ են դրսևորում բազմահատկանիշ դասակարգման աղյուսակի երկրորդ 50 կետերի՝ ձևաբանական հատկանիշների համեմատության արդյունքում (հավելվածի Աղյուսակ 1)՝ տարբերվելով նվազագույնը՝ 1 և առավելագույնը՝ 4,5 միավորով (Աղյուսակ 4):

²⁸ **Ա. Վարդանյան**, Հյուսիսային Գողթնի խոսվածքների ձևաբանական առանձնահատկությունները - Գ. Ջահուկյանի *100-ամյակին նվիրված հայերենագիտական գիտաժողովի նյութեր*, Ե., 2020, էջ 126-137:

Հյուսիսային Գողթնի խոսվածքների ձևաբանական հատկանիշների ներքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բնակավայր	Բիստ	Մեսրոպական	Ողոհի	Ռամիս	Փառակա
Բիստ	—	4	3	2	2
Մեսրոպական	4	—	3,5	3	4,5
Ողոհի	3	3,5	—	1	4
Ռամիս	2	3	1	—	3,5
Փառակա	2	4,5	4	3,5	—

Ընդհանրացնելով Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչյունաբանական և ձևաբանական հատկանիշների աղյուսակների տվյալները՝ ստանում ենք ենթ հետևյալ պատկերները (Աղյուսակ 5, Գծապատկեր 1).

Հյուսիսային Գողթնի խոսվածքների բարբառային հատկանիշների
ներքին առնչությունների համեմատական աղյուսակ


Բնակավայր	Բիստ	Մեսրո- պական	Ողոհի	Ռամիս	Փառակա
Բիստ	—	9	9,5	8	7
Մեսրոպական	9	—	8	9	7,5
Ողոհի	9,5	8	—	5,5	8,5
Ռամիս	8	9	5,5	—	6,5
Փառակա	7	7,5	8,5	6,5	—

Հատկանիշների տարբերությունների ակնհայտ ցածր մակարդակը (ընդամենը 5,5-9,5 միավորի) վկայում է, որ Հյուսիսային Գողթնի հիշյալ բնակաայրերի խոսվածքները կարող են դիտվել որպես միևնույն բարբառի

կամ միջբարբառի խոսվածքներ, որը համապատասխանում է Գ. Ջահուկյանի սահմանած 0,5-22 միավորի տարբերություններով միջակայքին)²⁹:

Գծապատկեր 1

**Հյուսիսային Գողթնի խոսվածքների
ներքին առնչությունները**



Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման սկզբունքից ելնելով՝ Հյուսիսային Գողթնի խոսվածքախմբի՝ հարակից բարբառների նկատմամբ դիրքը

²⁹ Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 127:

ճշտելու նպատակով այս բարբառային միավորի ընդհանրացված-միջին բարբառային հատկանիշները (զուգահեռությունները) համեմատել ենք հարակից բարբառների հատկանիշների հետ (հավելվածի Աղյուսակ 2):

Որպես համեմատության եզրեր ընտրել ենք Հյուսիսային Գողթնին աշխարհագրորեն առավել մոտ տարածքներ ընդգրկող ավանդական բարբառները՝ Ագուլիսի, Արցախ-Սյունիքի և Մեղրու: 100 հայտնի բարբառային հատկանիշների³⁰ համեմատության արդյունքները վկայում են, որ Հյուսիսային Գողթնի խոսվածքախումբն ամենամերձավոր առնչություն ունի ինչպես Արցախ-Սյունիքի բարբառի (տարբերությունները կազմում են 21,5 միավոր, որը գրեթե խոսվածքից բարբառի անցման սահմանն է), այնպես էլ Մեղրու բարբառի (տարբերությունները կազմում են 23 միավոր) և Ագուլիսի բարբառի (տարբերությունները՝ 25 միավոր) հետ (Աղյուսակներ 6, 7, 8, Գծապատկեր 2):

³⁰ Գ. Զահուկյան, նշվ. աշխատանքը, էջ 41:

Աղյուսակ 6

Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչյունաբանական հատկանիշների արտաքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բարբառային միավոր	Ազուլիսի	Արցախ-Սյունիքի	Հյուսիսային Գողթնի	Մեղրու
Ազուլիսի	—	16	13,5	11,5
Արցախ-Սյունիքի	16	—	12	12
Հյուսիսային Գողթնի	13,5	12	—	12
Մեղրու	11,5	12	12	—

Աղյուսակ 7

Հյուսիսային Գողթնի խոսվածքների ձևաբանական հատկանիշների
արտաքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բարբառային միավոր	Ագուլիսի	Արցախ- Սյունիքի	Հյուսիսային Գողթնի	Մեղրու
Ագուլիսի	—	10,5	11,5	11
Արցախ- Սյունիքի	10,5	—	9,5	11,5
Հյուսիսային Գողթնի	11,5	9,5	—	11
Մեղրու	11	11,5	11	—


Աղյուսակ 8

Հյուսիսային Գողթնի խոսվածքների բարբառային հատկանիշների
արտաքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բարբառային միավոր	Ագուլիսի	Արցախ- Սյունիքի	Հյուսիսային Գողթնի	Մեղրու
Ագուլիսի	—	26,5	25	22,5
Արցախ- Սյունիքի	26,5	—	21,5	23,5
Հյուսիսային Գողթնի	25	21,5	—	23
Մեղրու	22,5	23,5	23	—

Գծապատկեր 2

Հյուսիսային Գողթնի խոսվածքների արտաքին առնչությունները




Հատկանիշների նմանօրինակ մերձավորությունները թույլ են տալիս եզրահանգելու, որ այս խոսվածքախումբը իրենից ներկայացնում է միջբարբառ հայ բարբառների արևելյան խմբակցության Արցախ-Շամախու կամ ծայրհյուսիսարևելյան միջբարբառախմբի Արցախ-Սյունիքի բարբառի և Ագուլիս-Մեղրու կամ արևելյան բարբառախմբի Մեղրու և Ագուլիսի բարբառների

միջև: Ի դեպ, միջբարբառի և մերձակա բարբառների միջև աշխարհագրական և լեզվական մերձավորությունների համընկնման փաստը ինքնին հաստատում է խոսվածքի տեղաբնիկ լինելու իրողությունը:

Հետևաբար, մեկ բարբառային միավորի մեջ ընդգրկված Հյուսիսային Գողթնի խոսվածքների այս խումբը անվանել ենք Հյուսիսային Գողթնի միջբարբառ:

Գողթնի խոսվածքների տարածման սահմանները (1918թ.)



ԲԱՌԱՅԱՆԿԵՐ

Բիստի խոսվածքի բառացանկ

ամման – ամեն	ըխա – երեխա
անգու – քարկտիկ	ընցըցնիլ – հանգցնել
անէր – աներ	թանալ – թանապուր
աշխարք – աշխարհ	թն – թե
նլիր – ալյուր	թնն – ընկերք
նխպո՞ր – աղբյուր	թո՞ւլ – թույլ
ննգիզ – ընկույզ	թէ – թի
նվիլ – ավել	թէփուտ – փետուր
նրին – արյուն	թըրէք՝ – թրիք
բըրդան – հանկարծ	թիժ – թեժ
գո՞ւլն – ցեց	թոխըր – քլունգ
գնհար – թույն	թօփ – թուփ
գնտիկ՝ – գատիկ	իլնիլ – ելնել
զըմբէռնը – զմռռու	իվիլ – ավելի
զիրթնրիլ – զարդարել	իրէս – երես
էր – ինչու	իրիք – երեք
	իրվնլ – երևալ
	իփիլ – եփել

լակուտ – լակոտ	կըճոճ – կճուճ
լո՞գո՞ – լեգու	կընէկ՝ – կնիկ
լիս – լույս	կըտօր – տանիք
խամբար –	կիտաստի – փիփերթ
եգիպտացորեն	կ'անթան – գաթա
խըզանանկ՝ – ծոծրակ	կ'անդվիլ – թաքնվել
խընամի – խնամի	կ'անպոտ – կապույտ
խընձործաղիկ –	կ'էղ – գյուղ
երեքնուկ	կ'իրիլ – գրել
խօնը – ուրց	կուրուր – կրիա
ծանդըր – ծանր	կօնը – կուռ
ծէծ – ծիծ	կօրակ – կորեկ
ծէտ – ծիտ	հանյիսի – ափսոս
ծընէփակ – ծներեկ	հանչիլ – հաչալ
ծունդըր – ծունր	հօլոնք՝ – ուլունք
ծո՞ւկո՞ն – ձուկ	հաղուղ – խաղող
ծո՞ւկ – ձու	համբարք – համարք
ծօնգնը – ծունկ	հէնգ՝ – հինգ
ծօկ – ծով	հէր – հայր
կաթնավ – կաթնապուր	հընդրիլ – ընտրել
կամնը – կամ	դանջան – կաշաղակ
կըլօնձ – գարեկ	դանրիք – օտարական,
կըծէկ՝ – կծիկ	պանդուխտ
կըծօ – կծու	դազան – կաթսա
կըղանիլ – գողանալ	դալմաղալ – աղմուկ
կըղէզ – կորիզ	

դասաբ – մսագործ
դուրթի – տուփ, արկղ
դուշ – թռչուն
դոնադ – հյուր
դօշ – խոյ
ճահիր – ճախարակ
ճուր – ջուր
ճըլլօրիլ – թառամել
մէս – միս
մէտկ(ը) – միտք
մէր – մայր
միծանիլ – մեծանալ
միրաբ – ջրբաշխ
յեզնը – եզ
յերթ – երդիկ
նըղանիլ – նեղանալ
նօռնը – նուռ
շէշտի – շիւաչք
շիրէփ – շերէփ
ունց – ինչպէս
ուվ – ով
պոն – բույն
պատրօն – սկեսրայր
պէնդ – պինդ
պէռնը – բեռ
պըռուշկ – շրթունք

պիլիթ – բլիթ
պիրան – բերան
ջաղ – շյուղ
սոմբուլ – հասկ
սոնդուն – թոնրի
օղանցք
սէրտ – սիրտ
սիրփիլ – սրբել
սօխօջան – անձրևորդ
սօր – սուր
վէրց – որձ
տանանկ – դանակ
տաննը – դառն
տոնդում – դրում
տօխ – վառեկ, դոխ
տօռնը – դուռ
տերադօրմի –
տերողորմյա, թագբեհ
տէկ – տիկ
տէքըր – տեգր
տիժիկ – կայծ
տիրէվ – տերև
տօն – տուն
ցէց – ցից
ցօրան – ցորեն

փսհիմ – կռահում
փաննր – լապտեր
փանդ – հնար
փասուն – ձև, տեսք
փեդ – փայտ
փերմա – ֆերմա
փի – ճարպ
փութըր – քիչ
քիր – քույր
քնրանթանքնլն –
մողես
քիսօր – կեսօր
քոն – քուն
օթ – ութ
օխտը – յոթ

Մեսրոպավանի խոսվածքի բառացանկ

ախպէր – եղբայր	իլնիլ – ելնել
աղվէս – աղվես	իրէս – երես
առճունք – առաստաղ	իրիք – երեք
անոր – ալյուր	իրվան – երևալ
անխոր – աղբյուր	իփիլ – եփել
անգիգ – ընկույզ	լանմ – գոլ
անվոլ – ավել	լանփան – ընկույզի
բըրչեմ – մրջյուն	միջուկ
դուգ – ճիշտ, ուղիղ	լոնս – լույս
գանմոն – զամբյուղ	լէն – լայն
գիհանր – թույն	խանգան – չոր տերև
ըշտահաղուղ – դեղձ	խառնը – խառը
ըրխա – երեխա	խեթնուկ – երեքնուկ
թունդ – կծու	խընձաղա – ձնձաղիկ
թիլ – թել	խըրէկ – քիչ
թոխալ – ամալ, թուխալ	ծոնն – ձյուն
թօռ – անձրև	ծանդաք – ծամոն
թօռնը – թոռ	ծանդըր – ծանր

ծէր – ծայր
ծունդըր – ծունր
ծօկնը – ձուկ
ծօռ – ծուռ
կաթնը – կաթ
կարթիլ – կարդալ
կաքավ – կաքավ
կէծ – կայծ
կէռիք՝ – աստամ
կըղէզ – կորիզ
կըռէջ – խեժ (ծառի)
կ'սզսր – գազար
կ'սրսրնք – գարուն
կ'սրսրնր – կարմիր
կ'ոզ – մեզ
կ'ոլ – գայլ
կ'ոլձոլձ – կձուձ
կ'օղ – գող
կ'օնը – գառ
կ'իրիլ – գրել
օմբա – կոնք
կուկու – կկու
կօզ – կուզ
կօրակ – կորեկ
հաղալ – խաղալ

հաղացնիլ –
խաղացնել
հաղօղ – խաղող
հանէր – անէր
հավ – հավ
համբսրք – համարք
հընգըցընիլ – հանգցնել
հըռանիլ – հեռանալ
հիշտ – հեշտ
հուվ – ուվ
հոլոնք – ուլունք
հոլօրիլ – ոլորել
հոլչոլ – ոջիլ
հոլչոլոնտ – ոջլոտ
հօլ – հոլ
դսրիք – օտարական,
պանդուխտ
դազան – կաթսա
դալմաղալ – աղմուկ
դասաք – մսագործ
դավալի – բարդի
դուրի – տուփ, արկղ
դուշ – թռչուն
դօնաղ – հյուր
դօշ – խոյ

ճո՛ւճո՛ւ – անձրևորդ
 ճո՛ւր – ջուր
 ճըղեցկէոիք՝ –
 սեղանատամ
 ճընապա – ճանապարհ
 մաշ – կանաչ լոբի
 մարթ – մարդ
 մէշս – անտառ
 մըղմըղ – ցեց
 յեմիշան – սնձենու
 պտուղը
 յըղօլի – եղան
 յեղածով – ձվածեղ
 նախշուտ – գեղեցիկ
 նըղանիլ – նեղանալ
 շո՛ւտ – շուտ
 շէհ – ցող
 չիչ – չեչ
 պսփո՛ւկ – ճակնդեղ
 պարգուտ – փլավքամիչ
 պէոնը – բեռ
 պէրց – բարձ
 պըզեզ – ճանճի թրթուր
 պըռուշկ – շրթունք
 պըրանիլ – պառկել

ջամուշ – գոմէշ
 ջօնգս – ցուլ
 սո՛ւն – սյուն
 սալլըմ – հարբուխ
 սառուծ – սառույց
 սէրմ – սերմ
 սըվայի – բացի
 վիզքօք – ծոծրակ
 վօնդ – ոտք
 վօռհնը – որդ
 վօսկուռ – ոսկոր
 վօրթի – որդի
 տո՛ւնդո՛ւմ – դդում
 տո՛ւոնը – դուռ
 տակոիք – արմատ
 տաշտ – տաշտ
 տափ – գետին
 տէոնը – դառը
 տօն – տուն
 ցօրան – ցորեն
 ո՛ւշոնց – հայհոյանք
 փասուն – ձև, տեսք
 փահմ – կռահում
 փանսը – լապտեր
 փանդ – հնար

փերմա – ֆերմա
փընդըդ – կադին
փօջիկ – միզապարկ
փօր – փոր
քաշկ – սարդ
քըռի տալ – հրել
քյւրանթո – գերանդի
քուր – քույր
քոլլւշ – ծղոտ
քոհ – ճոճանակ
օխցը – օձ
օքուտ – լավ
օմբուր – կյանք

Ողոհիի խոսվածքի բառացանկ

աբուռ – ամոթ, պատիվ	
ազար – համաճարակ	գըլօխ – գլուխ
ախպէր – եղբայր	գըլնս – կեռաս
ախպուր – աղբյուր	գիլանար – բալ
աղրնբ – կարիճ	գըրդնբնրն –
անգանջ – ականջ	երկբոնակ սղոց
ապի – հայր	գոնլ – գայլ
արաբա – սայլ	գոնդոն – կոճղ
արազ – երազ	գոնպոն – մեծ մուրճ
արխ – առու	գօբլնգ – սունկ
արկաթ – երկաթ	գօրի – գարի
արուն – արյուն	դավշան – նապաստակ
նզի – մայր	դնստըմալ – բոնիչ
բախչա – այգի	(խոհանոցի)
բայդուշ – բու	դնվն – ուղտ
բարամում – մեղրամում	դնրվնգն – դարպաս
բէհ – բահ	զննգ – զանգ
բէն – բան	զօլա – փայտե երկար
բըլդի – անձրևորդ	ձող
բըրանի – դդում	
բուխսուն – դարան	

էծ – այծ
էդ – այդ
էն – այն
էշ – էշ
էս – այս
ընդէդ – այնտեղ
ըստէդ – այստեղ
ըռէիս – երաիս
ըրկէ – երեկ
թա – թե
թաթալօշ – ապտակ
թաթպան – ձեռնոց
թննթն – թակարդ
թնմթնքի – ծխախոտ
թայա – դեզ
թաշտ – տաշտ
թիլ – թել
թէփուտ – փետուր
թնոգթնոյն – խլեզ
թնոլթի – աղվես
թոխըր – քլունգ
թօռ – անձրև
ժաժիկ – շոռ
իրէք – երէք
իրիս – երես
իս – ես
իվըլուկ – ավելուկ

իփել – եփել
լէցել – լացել
լնոգի – լեզու
լնու – լույս
խանչալ – դաշույն
խամ – անփորձ
խօզել – խուզել
խօխա – երեխա
խօյլա – մորաքույր
խօրօթա – զրույց
խօնը – ուրց
ծիլի – ածելի
ծիկուն – ձուկ
ծերան – ծիրան
ծըմէռ – ձմեռ
ծըմէրուկ – ձմերուկ
կավ – կով
կարմունջ – կամուրջ
կէծակ – կայծակ
կէտ – գետ
կըճօճ – կճուճ
կընէզ – կնիկ
կըռէք – ատամ
կօժ – կուժ
կօլա – փոքր կուժ
կօլ տալ – կուլ տալ
հազի – պոչ

հաղինջ – եղինջ
 հավօղ – խաղող
 հաղլազարա –
 դարպասի, դռան
 փակիչ
 հանգիստարան –
 գերեզմանատուն
 հանրթ – երդիկ
 հընգեր – ընկեր
 հըրցընել – հարցնել
 հէտի – համար
 հէրինջ – երինջ
 հէրսօտել – բարկանալ,
 զայրանալ
 հիբ – երբ
 հիլիլի – հայելի
 հինչ – ինչ
 հինչքան – ինչքան
 հըրսանիք – հարսանիք
 հըվաքել – հավաքել
 հունչուր – ինչպես
 հուր – ուր
 հօրագ – ուրագ
 հուվ – ով
 հոլլոնք – ուլլունք
 հոլջոլ – ոջիլ

հօլ – ուլ
 դանձիր – ադանձ
 դանխայն – պոռնիկ
 դավալ – դափ
 դավախ – բարդի
 դարդա – ագռավ
 դարավաշ – աղախին
 դափլան – վագր
 դըշլաղ – ձմեռանոց
 դըփըլ – կողպեք
 դում – ավագ
 դուրդում – արճիճ
 ճըլօրել – թառամել
 ճընանչել – ճանաչել
 ճապըտ – ճիպոտ
 ճօղնը – ճյուղ
 մալա – ծեփիչ
 մագրա – փարախ, գոմ
 մակարբաշի –
 մակարապետ
 մանիլն – թաղ
 մանք – մենք
 մաշ – կանաչ լոբի
 մէգար – գոգնոց
 մէշն – անտառ
 մըհէգ – հիմա
 մօծ – մեծ

մօկըն – մուկ
յալանչի – խեղկատակ
յալօրի – ձրիակեր
յէդ – յուդ
յէղածու – ձվածեղ
յէղօլի – եղան
յէմըշան – ալոճ
յէշէլ – նայել
յօնջա – առվույտ
յումբուրուդ – բռունցք
նալ – պայտ
նալբանդ – պայտար
նաղարա – թմբուկ
նաղըլ – հեքիաթ
նանի – մայրիկ
նարդիվան – աստիճան
նամ – խոնավ
նանն – տատիկ
շանն – եղան
շէն – գյուղ
շըոթկան – ջրհորդան
շուշա – ապակի
շօն – շուն
շախմախ – կայծահան
շամ – սոճի
շան – մեծ տակառ
շնդանա – կանեփ

չնլիկ – ձեռնափայտ
չնմչնկ – շերեփ
չըխպօր – ընկույզ
պարէկամ – բարէկամ
պէծ – կայծ
պէկլա – բակլա
պէմբակ – բամբակ
պէրակ – բարակ
պէրան – բերան
պէցուր – բարձր
պըրպերան – փիփերթ
պիզ – բիզ
պիզ տալ – բզել
պիլական – բնկալ
պըռավիլ – պառավել,
ծերանալ
ջահրա – ճախարակ
ջամհաթ – ժողովուրդ,
բազմություն
ջանավար – զազան
ռնդ – հետք
ռննգ – երանգ, գույն
սալակ – զամբյուղ
սաբաթ – կողով
սանլն – զամբյուղ
սանթոն – պատվանդան

սըխկէլ – լավ ծեծել
 սընդու – թոնրի ակ
 սէլ – 1. սայլ 2. հեղեղ
 սօղան – սոխ
 սօտ – սուտ
 սօրին – լավ, ընտիր
 վըռիկ – անյուղ ապուր
 վօրցակ – աքլոր
 տափ – գետին
 տակոյի – արմատ
 տէնակ – դանակ
 տէրտակ – դատարկ
 տըմակ – դմակ
 տըմբըրէլ – թմբէլ
 ունթունէլ – ընդունէլ
 ուշապ – վիշապ
 ուրթում – երդում
 փալաս – կարպետ
 փաննգ – հովազ
 փանփանն – թիթեռ
 փառչ – կավե փոքր
 ջրաման
 փէտ – փայտ
 փիյադա – հետիոտն
 փընդըղ – պնդուկ
 քալ – խակ
 քանն – ցուլ

քաննգօշ –
 չորթանապուր
 քանսիք – աղքատ
 քանփլնթին – աքցան
 քանթաննքանն –
 քարադոդոշ (մեծ
 մողես)
 քանրանթի – գերանդի
 քիլիթ – բանալի
 քօն – քուն
 քօք – արմատ
 օզէլ – ուզէլ
 օխց – օձ
 օս – ուս
 օրաղ – մանգաղ
 փաննք – ճակատագիր
 փանհլն – մշակ
 փանդ – հնարք

Ռամիսի խոսվածքի բառացանկ

ախպար – եղբայր	գըրդանբիլ – երկբռնակ
ած – այծ	սղոց
աղինջ – եղինջ	գումգում – բու
աղուզ – կաթի խեժ	գոփին – մեծ մուրճ
աղվիս – աղվես	դաստըմօլ – բռնիչ
անգուճ – ականջ	(խոհանոցի)
աշի – մանդակ	դանբան – հացի
արագ – երագ	պահարան
արծրի – ածելի	դանբան – դարպաս
արկաթ – երկաթ	դօփ – դափ
սխպուր – աղբյուր	զըղօլի – փայտե երկար
անդառ – ձվածեղ	ձող
անգուճ – ընկույզ	էզնա – հորաքրոջ
բօվ – մորմ	ամուսին
բարամում – մեղրամում	երինջ – երինջ
բօխա – այգի	ընանուխ – անանուխ
գանբո – դամբուլ	ընէխ – երախ
գըլանօր – բալ	ըռըկապի – գոգնոց
գըլաս – կեռաս	ըվուլուկ – ավելուկ
	ըրխա – երեխա
	ըրկօսին – քլունգ

ըրդունիկ – աղավնի
 թան – թե
 թանվան – գոմ
 թաթար – աթար
 թալկ – թակարդ
 թայա – դեզ
 թանալ – մաճնապուր
 թեփուռ – փետուր
 թիլ – թել
 թոռ – անձրև
 իլիկ – իլիկ
 իրիս – երես
 իրիք – երեք
 իփ – երբ
 լանգի – սղորուկ
 լանանգրի – պղնձյա լայն
 թաս
 լուգո – լեզու
 խոռնը – ուրց
 խըլազ – խլեզ
 ծուկուն – ձուկ
 ծերան – ծիրան
 ծըմեռնը – ձմեռ
 ծըմերուկ – ձմերուկ
 ծըռնըթելի – աղտորի
 (սումախի) ծառ
 կեծակ – կայծակ

կեռիք – ատամ
 կըճըղոկ – վայրի
 բանջար (կծու հազար)
 կընէկ – կնիկ
 կըտըհադու – մոշ
 կիտ – գետ
 կոլ – գայլ
 կոճի – գութան
 կոճի – գարի
 կեղ – 1. գյուղ, 2. թիզ
 կըհոկ – մանր
 անասունների
 ձմեռանոց
 կըտանտի – փիփերթ
 կոժ – կուժ
 կոլ տալ – կուլ տալ
 կով – կով
 հանգիստարան –
 գերեզմանատուն
 հուշնալ – վիշապ
 հադու – խադոդ
 հըլերի – հայելի
 հըրսանիք – հարսանիք
 հըրսուտիլ – բարկանալ
 հըրցանիլ – հարցնել
 հինգիր – ընկեր
 դափլան – վագր

դըփիլ – կողպեք
 դում – ավագ
 ճօվ – կատվի ձագ
 ճըլօրիլ – թառամել
 ճըխարակ – ճախարակ
 ճընանչիլ – ճանաչել
 ճըպատ – ճիպոտ
 ճուղնը – ճյուղ
 մակարբաշի –
 մակարապետ
 մայա – պանրի մակարդ
 մանգաղնը – մանգաղ
 մանդոզ – դռան փակիչ
 մանիլն – թաղ
 մանրս – արտեզր
 մեշն – անտառ
 միլիսեզնը – ալոճի
 տեսակ
 միծ – մեծ
 միք – մենք
 մուշ – լոբի
 մօճ – մաճ
 յօնջն – առվույտ
 յալանչի – խեղկատակ
 յըղօլի – եղան
 յումրուղ – բռունցք

նանլանդ – պայտար
 նամ – խոնավ
 նանն – տատիկ
 նանդըվան – աստիճան
 նաղարա – թմբուկ
 նօլնը – պայտ
 շամբանլուք – շագանակ
 շախկա – մորթած,
 մաքրած անասունի
 կեսը
 շըռօդան – ջրհորդան
 շիրիփ – շերեփ
 շտաղուկ – դեղձ
 շօն – շուն
 ուղթում – երդում
 ուռտի – ինչպես
 չնլիզ – ձեռնափայտ
 չամ – սոճի
 պամբանկ – բամբակ
 պանրնկ – բարակ
 պոն – բան
 պօհ – բահ
 պակլա – բակլա
 պեծ – կայծ
 պերան – բերան

պըլնկան – բնկալ
պըլննիք՝ – բանալի
ռնդ – հետք
ռննգ – երանգ
սնքնթ – կողով
սնքնո –
պատուհանագոգ
սոնդոն – թոնրի
օդանցք
սալակ – զամբյուղ
սեզնը – ալոճ
սել – հեղեղ
սելիմ – տատրակ
սեռնը – դիտակետ
սընդնքնր – 1. սանդի
քար, 2. երկարագլուխ
սուխ – սոխ
տակոիք – արմատ
տափ – հարթ տեղ
տաննկ – դանակ
տնրտնկ – դատարկ
տըմօկ – դմակ
տըռաժան – իշամեղու,
կրետ
փնհլն – մշակ
փննդ – հնարք

փըռննձիկ – քոնդատ
փիյադա – հետիոտն
փօռչ – կապե փոքր
ջրաման
քնփլնթին – աքցան
քըլըթանթոուշ –
քարադոդոշ (մեծ
մողես)
քըչաման – քարաճիկ
քնլ – խակ
քնսիք – աղքատ
քնթոնլ – գդալ
քօրդ – քուրդ
քօրթ – թուրք
օդուծ – օձ (սեռ.՝ օխցի)
օյզի – մայր
օրաք – ուրագ
օրտ – արտ
օփի – բարդի
օրծնկ – աքլոր

Փառակայի խոսվածքի բառացանկ

ամառնը – ամառ	ծոմ – եկեղեցի
անիր – աներ	իզնը – եզ
աշխարք – աշխարհ	իրիս– երես
առնատ – առնէտ	իրիվնլ – երևալ
աք – էզ	իրիք՝ – երեք
անդնփխանա –	իփ – երբ
զուգարան	լնն – լայն
անիր – ալուր	լօց – լաց
անխալնր – եղբայր	լակուտ – լակոտ
անխալնր – աղբյուր	լըղանիլ – լողանալ
անգնիզ – ընկույզ	խնփիլ – խաբել
անրիվ – արև	խոնձոնր – խնձոր
անք՝ – էզ	խիլք – խելք
գոնլքն – գուլպա	խուզ – խոզ
դըրմըղ – փոցիս	խուփ – խոփ
զըմբուտ – զմուռս	ծառ – ծառ
էշ – էշ	ծունդուր – ծունր
թանմուզ – մաքուր	ծօռ – ծուռ
թիփ – թեփ	ծոնն – ձյուն
թիփըն – փետուր	կըռօճ – ծառի խեժ
	կըղազ – կորիզ

կութ – կոթ
կումուն – կամ
կո՛ւշ – կրիա
կօզ – կուզ
կօթնը – կաթ
կօռնը – գառ
կօվ – կով
կ'նայո՛ւտ – կապույտ
կ'նրո՛նք – գարուն
կ'նրթիլ – կարդալ
կըտատի – փիփերթ
կ'ո՛ւլ – գայլ
կ'ո՛ւք – գոգ
կ'օրի – գարի
կիրիլ – գրել
հաղ – խաղ
հաղաղ – խաղաղ
հաղու – խաղող
հնրփիլ – արբենալ
հնք'ո՛ւ – պոչ, ազի
հնքնիլ – հագնել
հէխտիլ – խեղդել
հէրինջ – երինջ
հըլմվո՛ւր – ծերունի
հըլօրիլ – ոլորել

հըմբարիլ – հաշվել
հըրէնակ – երանի
հինգիր – ընկեր
(հ)իրթ – երդիկ
հիրկի – երեկ
hog – հաց
ղազան – կաթսա
ղալմաղալ – աղմուկ
ղասաբ – մսագործ
ղութի – տութի, արկղ
ղուշ – թռչուն
ղօնաղ – հյուր
ղօշ – խոյ
ճննղաց – ջրաղաց
ճիժիկ – կայծ
ճո՛ւր – ջուր
մունդուր – մանր
մուշ – լոբի
մօզ – մագ
մօթ – մութ
մօկուն – մուկ
յնլջնկ – ձեռնոց
յէխտ – աղբ
նըղանիլ – նեղանալ
նօռնը – նուռ
շըտաղուկ – դեղձ
պատրուն – սկեսրայր

պըհազ – պահեզ,
բանջարանոց
պըմփէրան – դանդուռ
պիրան – բերան
պոթ – բութ
պօհ – բահ
պօրց – բարձ
սիրմը – սերմ
սունգուն – սունկ
սոն – սյուն
սօռնը – սառը
տախց – դաղձ
տակոիկ – արմատ
տասսը – տասը
տանր – տէր
տանքիր – տեգր
տէկ՝ – տիկ
տուղ – ջրաղացի
ցորենի արկղ
տօշտ – տաշտ
տօռնը – դառը
ցօրան – ցորեն
ուրճունք – առաստաղ
ոմբոնր – կյանք
ոնրթոմ – երդում

ոնրթնը – որդ
ուրց – որձ
փասուն – ձև
փանհմ – կռահում
փաննր – լապտեր
փանդ – հնար
փաղամբուդասի –
եզիպտացորեն
փոշոնր – փշուր
փերմա – ֆերմա
քինթ – քիթ
քըչաղակ – կաչաղակ
քանրան – աթար
քոնլանշ – ծղոտ
քոնլոնգ՝ – աղբանոց
քոնր – քույր
օխտը – յոթ
օխց – օձ
օտիլ – ուտել
օրչ – արջ
օփ – ափ
օրիշ – ուրիշ
օրփանթ – ուրբաթ

ՆՄՈՒՇՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ՍՈՒՏԱՄԱՆԸ
ՀԵՔԻԱԹԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԳՈՂԹՆԻ
ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՎ

ՍԸՏԱՄԱՆԸ

(Բիստի խոսվածք)

Ընրմ ա, ընրմ չի, մըն թաքավեր ա ընրմ: Էս թաքավերը ուրէն յերգիրըմը ասըմ ա. «Ուվ էնդի մըն սօտ ասի, վեր յէս ասիմ՝ սօտ ա, իմ թաքավորութունիս կէսը կըտամ ընդրան»:

Մըն չօբան ա կ'օլիս: Ասըմ ա.

- Թաքավերը ապրած կէնա, իմ հէրըս մըն դագաննակ օնի էլ, վեր ըստեղան մէկնըմ էլ, յերգինքըմը աստղերը խառնըմ էլ:

- Կըլնի,- ասըմ ա թաքավերը:- Իմ պապըս էլ մըն դայլան օնի էլ. մըն ճօնդը պիրանին էլ թինըմ, էն մըն ճօնդը մէկնըմ, արեվիցը վանըմ:

Մըտասանը կըլօխը քօրէլավ տոնս ան կ'օլիս:

Մըն դարգի ա կ'օլիս: Ասըմ ա.

- Ներօղորթուն կանիս, թաքավեր, յէս պետմա շոփտ
կ'օմ էլ, յիտանհամ: Իրգի շատ թօտ էկավ, կէծակնին տըրա-
քան, յերգինքը ճըղվավ, նանհանձ ըմ էլ կըրկատելի:

- Հա, օքըտ ըս արած,- ասըմ ա թաքավօրը,- համա
օքըտ չըս կըրկատած. էս քըշէր մը փութըր թօտ վէր
թանփանվ:

Էս էլ ա տոնս կ'օլիս:

Մէշխօլ ա կ'օլիս մըն քանսիք կէղացի՝ կօտը կըռ-
նատակին:

- Տո՞ւն ինչ էս օգըմ, ա՛յ մարթ,- հըրցընըմ ա
թաքավէրը:

- Ինձ մըն կօտ վօսկի իս պարտ, յէկած ըմ տանիմ:

- Մըն կօտ վօսկի՞,- մըհաթանլ ան մընըմ թաքա-
վօրը:- Սօտ ըս ասըմ, յէս քէզ վօսկի չիմ պարտ:

- Ա՛գանք սօտ ըմ ասըմ, թաքավորութունիդ կէսը
տօր:

- Չէ, չէ, դո՞ւզ ըս ասըմ,- իսօսկը փօխըմ ա
թաքավէրը:

- Դո՞ւզ ըմ ասըմ՝ մըն կօտ վօսկին տօր:

*Գրանցել է Անահիտ Մկրտումյանը՝ 1983թ.
Բարբառախոս՝
Վաղինակ Հովակիմյան (ծնվ. 1925, Բիստ)*

ՍՕՏ ԽՕՍՕՂԸ

(Մեսրոպավանի խոսվածք)

Ի՞նչում ա, ի՞նչում չի՝ մըն թաքավոր: Էս թաքավորը ուրան յերգիրըմը խանքսն անում. «Հուվ էնդի սօտ ասի, վօր յէս ասիմ՝ սօտ ա, իմ թաքավորութեանըս կէսը կըտամ ունդո՛ւր:

Կ'օլիս ան մըն չօքան: Ասում ա.

- Թաքավորը ապրած մընա, իմ հօրըս մըն դանգանակ օնէր, վօր ըստէղան մէկնում էր, յերգինքըմը աստղէրը խառնում էր:

- Կըպատահի,- պատասխան ա տալիս թաքավորը:- Իմ պապիս ան մըն չուրուխ օնէր. մըն յանը պիւրանին էր թիւնում, էն մըն յանը մէկնում էր, արեվիցը վառում:

Սօտ խօսօղը կըլօխը քօրէլնվ տո՛ւս ան կ'օլիս:

Կ'օլիս ան մըն դանգի: Ասում ա.

- Նէրադութուն, թաքավոր, յէս շո՛ւտ պէտկ ա կ'օմ էր, յէտ ընգամ: Իւրգի շատ թօռ յէկավ, կէծակները տըրաքան, յերգինքը ճըղվավ, քէցանք ըմ էր կըրկատիմ:

- Հա, օքուտ ըս արած,- ասում ա թաքավորը,- համա օքուտ չըս էր կըրկատած. էս քի՛շէրնվ մըն խըրէկ թօռ յէկավ:

Էս ան ան տո՛ւս կ'օլիս:

Կ'օլիս ան մըն քանսիք կէղացի՝ չափը կըմնատակին:

- Տո՞ւ՞ հինչ ըս օգըմ, ա՛յ մարթ,- հրըցընըմ ա
թաքավորը:

- Ինձ մըն չափ վօսկի իս պարտք, յեկած ըմ տանիմ:

- Մըն չափ վօսկի՞,- մի՞հնա՞նքն ա՛ մընըմ
թաքավորը:- Սօտ ըս ասըմ, յէս քեզ վօսկի չիմ պարտք:

- Թա՛ վօր սօտ ըմ ասըմ, թաքավորութեանդ կէսը
տօ:

- Չէ, չէ, դօրթ ըս ասըմ,- իսօսկը փօխըմ ա
թաքավորը:

- Ղօրթ ըմ ասըմ՝ մըն չափ վօսկին տօ:

Գրանցել է Ժաննա Միքայելյանը՝ 1983թ.

Բարբառախոսներ՝

Հակոբ Հակոբջանյան (ծնվ.1912, Մեսրոպավան)

Բսկուհի Հակոբջանյան (ծնվ.1921, Մեսրոպավան)

ՍՕՏ ԽՕՍՕՂԸ

(Ողոհիի խոսվածք)

Իլնձ ա, իլնձ չի, մին թաքավոր ա իլնձ: Էս թաքա-
վորը ո՞րնն յերգիրումը ասըմ ա. «Հուվ օր ընդի մին սօտ
ասի, վօր իս ասըմ՝ սօտ ա, իմ թաքավորությունիս կէսը
կըտամ ո՞րնն»:

Մին չօբան ա գժօլիս: Ասըմ ա.

- Թաքավորը ապրած կէնա, իմ հարըս մին դնգ'անանկ օներ, վօր ըստէդից մէկնըմ էր, յերգինքըմը աստըդները խառնըմ էր:

- Կիինի,- ասըմ ա թաքավօրը:- Իմ պապըս էլ մին չուրօլիս օներ. մին յանը բէրանին էլ դըրըմ, էն մին յանը մէկնըմ, արըվիցը վառըմ:

Սօտասանը գ'ըլօխը քօրէլավ դիւս ա գ'օլիս:

Մին դնրգի ա գ'օլիս: Ասըմ ա.

- Նէրօդութուն կանէս, թաքավօր, իս պիտի շուտ գ'օմ էլ, յէտացալ ըմ: Էրէգ շատ թօռ ա յէկալ, կէծակնին տըրաքալ ան, յերգինքը ճըդվալ ա, գէնցած ըմ էլ կըրկատիլի:

- Հա, սօրին ըս արած,- ասըմ ա թաքավօրը,- համա սօրին չըս էլ կըրկատած. էս քըշէր մըխըրէգ թօռ ա յէկալ:

Էս էլ ա դիւս գ'օլիս:

Գ'օլիս ա մին ք'անսիբ գ'էղացի՝ չափը կըռնատակին:

- Դո՞ւ հինչ ըս օզըմ, ա՛յ մարթ,- հըրցըրըմ ա թաքավօրը:

- Ինձ մին չափ վօսկի իս պարտ, յէկած ըմ տանըմ:

- Մին չափ վօսկի՞,- մնթնլ ա մընըմ թաքավօրը:-

Սօտ ըս ասըմ, իս քիզի վօսկի չըմ պարտ:

- Ա՛գնր սօտ ըմ ասըմ, թաքավօրութունիդ կէսը տօր:

- Չէ, չէ, դիւզ ըս ասըմ,- խօսկը փօխըմ ա թաքավօրը:

- Դիմում ըմ ասըմ՝ մին չափ վօսկին տօր:

*Գրանցել է Արտակ Վարդանյանը՝ 2018-2019թթ.,
Բարբառախոսներ՝
Ռուբեն Մարտիրոսյան (ծնվ. 1932, Ողոհի)
Լիպարիտ-Բաբկեն Դավթյան (ծնվ. 1930, Ողոհի)
Մայրիկ Եղիազարյան-Գասպարյան
(ծնվ. 1929, Ողոհի)
Վոլոդյա Առաքելյան (ծնվ. 1951, Ողոհի)*

ՍՕՏԱՄԱՆԸ

(Ռամիսի խոսվածք)

Իլնիս մ, իլնիս չի՝ մուն թաքավօր: Աս թա-
քավօրը հոօրն յերգըրոմը հայտնում ա. «Ուլ անդի սօտ
ասի, վօր իս ասիմ՝ սօտ ա, իմ թաքավօրութան կէսը տօլ
ըմ հոօրն»:

Գօլիս մ մուն չօրան: Ասում ա.

- Թաքավօրն ապրած կէնա, իմ հարը մուն
դնգանակ օնի նէլ, մուն յանը ըստիյան մէկնում նէլ,
յերգինքի օստոլները խառնում:

- Պատանիլ մ,- ջըղաբ ա տօլիս թաքավօրը:- Իմ
պօպիս ալ մուն չիբուի օնի նէլ. մըն յանը տոօրոմն նէլ
պիրանին, մուն յանն ալ մէկնում, անբլիցը վառում:

Սօտասանը կըլօխը քօրէլօլ նահալ ա տոօրքը:

Գօլիս ան մուն դանդի: Ասում ա.

- Ներադրթուն, թաքավոր, իս շնոտ պետկ ա գոմ
նէլ, հիտանհամ: Հիրկի շօտ թօռ ա էկալ, կէծակները
տըրըխկահալ ըն, յերգինքը մէչան ճըղվալ ա, նանհան ըմ
նէլ կըրկըտիմ:

- Հօ, օքուտ ուս արած,- ասըմ ա թաքավորը,-
համա օքուտ չըս նէլ կըրկատած. աս քիշերվին մուն
պուտի թօռ ա էկալ:

Աս ալ ա նահալ տոփքը:

Մէշիօլ ա գօլիս մուն քանսիք կէղացի՝ չօփը
կըռնըտակին:

- Տո՞ ինչ ըս օգոմ, ա՛յ մարթ,- հըռցանում ա
թաքավորը:

- Ինձ մուն չօփ օսկի իս պօռտք, էկած ըմ տանիմ:

- Մուն չօփ օսկի՞,- զարմանում ա թաքավորը:-

Սօտ ուս ասում, իս քիզ օսկի չիմ պօռտք:

- Թա վօր սօտ ըմ ասում, թաքավորութանդ կէսը
տօ:

- Չէ, չէ, դո՞ւզ ո՞ւս ասում,- խօսկը փօխում ա
թաքավորը:

- Դո՞ւզ ո՞ւմ ասում՝ մուն չօփ օսկին տօ:

Գրանցել է Արտակ Վարդանյանը՝ 2018թ.

Բարբառայտսներ՝

Մարուսյա Կոսկանդէլյան (ծնվ. 1932, Ռամիս)

Բորիս Միքայէլյան (ծնվ. 1943, Ջուլֆա)

ՄՕՏ ԽՕՄՕՂԸ

(Փառակայի խոսվածք)

Էլըմ ա, էլըմ չի՝ մըն թաքավոր: Աս թաքավորը հոփրան յերգըրըմը խաբար անըմ. «Ուվ օր անթավուր սօտ ասի, օր իս ասիմ՝ սօտ ա, իմ թաքավորութան կէսը տօլ ըմ հոփրան»:

Կօյիս ա մըն չօբան, ասըմ.

- Թաքավորը ապրած կէնա, իմ հսրըս մըն դնգանակ ըննանլ, օր ըստիյան մէկնըմ նանլ, յերգինքումը աստըղնէն խառնըմ հոփրու:

- Պատահիլ ա,- ասըմ ա թաքավորը:- Իմ պապիս ալ մըն չուբուղ ըննանլ. մըն ճօնդը պիրանին նանլ տիրըմ, մըն ճօնդն ալ մէկնըմ նանլ հըրէքակին՝ վառըմ:

Սօտ ասօղը կըլօխը քերէլօվ տոնս ա կօյիս նանլիս:

Կօյիս մըն դարգի: Ասըմ ա.

- Նէրօղութուն, թաքավոր, իս շուտ ըմ նանլ կ'ուլնի, հիտ իմ ինգանլ: Հիրկէ շատ թօռ ա յէկալ, կէծակը տըրըքկահալ ա, յերգինքը մէչան ճըղվալ ա, նանհան ըմ նանլ կըրկատիմ:

- Հա, օքուտ ըս արած, համա օքուտ չըս նանլ կըրկատած, աս քիշէրվին մըն կիճի թօռ ա յէկալ,- ասըմ ա թաքավորը:

Աս ալ ա տոնս կ'օյիս:

Մըտըմ ա մէշղօլ մըն ք'ասիք կէդացի՝ կօտը կըռ-
նատակին:

- Տոն^օ ինչ ըս օգըմ, ա՛յ մարթ,- հըրցընըմ ա թա-
քավօրը:

- Ինձ մըն չօփ օսկի ըս պարտ, յէկած ըմ տանիմ:

- Մըն չօփ օսկի^օ, - թաքավօրը զարմանըմ ա:- Սօտ
ըս ասըմ, իս քիզ օսկի չիմ պարտ:

- Թոն օր սօտ ըմ ասըմ, թաքավուրութանդ կէսը սօ:

- Չէ, չէ, դօրթ ըս ասըմ,- խօսկը փօխըմ ա թա-
քավօրը:

- Ղօրթ ըմ ասըմ՝ մըն չօփ օսկին սօ:

Գրանցել է Ալբերտ Խաչատրյանը՝ 1977թ.

Բարբառախոսներ՝

Գուրգեն Հարությունյան (ծնվ.1909, Փառակա)

Սուրեն Ադամյան (ծնվ.1906, Փառակա)

Վարդուշ Գալոյան (ծնվ.1919, Փառակա)

«ՕՁԻ ՎՐԵԺԸ» ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ
ՀՅՈՒՄԻՍՏԱՅԻՆ ԳՈՂԹՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՎ

ՕՑԻ ԱԶԸՂԸ
(Բիստի խոսվածք)

Մըն օց ա յէլած՝ օխտը բալան ա յէլած: Մըն օր էտ օցը բալանէրը հանըմ ա վեր ման ածի: Մըն չօբան կ'օլիս ա, բալանէրին սպանըմ: Մէրը փախըմ ա՝ մըտըմ ա պոնը: Մինչէվնա իրէք ամիս էտ չօբանի բուխսունը պահըմ ա վեր կըծի, կարըմ չի կըծի: Մըն օր իրէն պոնի մէջիցը տըսնըմ ա, թէ չօբանը վօխչարը քըթըմ ա, ամանավը թինըմ ա ընդէդ, ինք'ը՝ չօբանը քինսլիս ա վեր յէտ տա փախած վօխչարը: Օցը պոնիցը տոնս ա կ'օլիս, էն բադիի կաթնին մէչը աղդու ա ածըմ: Մըն մէրուքը յերգ'ան էրք'անջ կ'օլիս ա խըմըմ ա կաթնը, ըստակըմ ա ընդէդ: Ղուշէրը կ'օլիս ըն մէսը օտըմ, քինսլիս ըն ծօվը՝ ճոնր խըմըն, ըստակըմ ըն, ընգըմ ըն ծօվը: Ծօվին մաչէն ծուկուննին օտըմ ըն, կըտօրվըմ: Քինալօդ-կ'օլօդնին էլ ընդըրանց փըռնըմ ըն օտըմ, ուրէնք էլ կըտօրվըմ:

*Գրանցել է Հրաչյա Աճառյանը՝ 1932թ.
Բարբառախոսներ՝
Գրիգոր Հարությունյան (ծնվ. 1913, Բիստ)
Խաչատուր Սարգսյան (ծնվ. 1882, Բիստ)*

ՕԽՅԻ ԱԶԸՂԸ

(Մեսրոպականի խոսվածք)

Մըն օխց ա իլնծ՝ օխտը բալան ա իլնծ: Մըն օր էտ օխցու բալաները հանըմ ա վօր ման ածի: Մըն չօբան կ'օլիս ան, բալանին սպանըմ: Մարը փախըմ ա՝ մըտըմ ա պոնը: Մինչէվ իրէք ամիս էտ չօբանի բուխսունը պահըմ ա վօր կըծի, կարըմ չի կըծի: Մըն օր ուրան պոնի մէջիցը տըսնըմ ա, թան չօբանը վըխչարը քըթըմ ա, ամանավը թիրիմ ա ընդէդ, ինքը՝ չօբանը քինըմ ա վօր յէտ տա փախած վօխչարը: Օխցը պոնիցը տոնս ան կ'օլիս, էն բաղիին կաթնին մէջը աղուվ ա ածըմ: Մըն մերուքը յերգան էրքանջ կ'օլիս ան խըմըմ ա կաթնը, ըստակըմ ա ընդէդ: Ղուշէրը կ'օլիս ըն մըսըր օտըմ, քինըմ ըն ծօվու՝ ճուր խըմըմ, ըստակըմ ըն, ընգըմ ըն ծօվը: Ծօվին մէջին ծուկունները օտըմ ըն, կըտօրվըմ: Քինօդ-կոնլօղնէն էլ ընդիցան փըռնըմ ըն օտըմ, ուրնք էլ կըտօրվըմ:

Գրանցել է Հրաչյա Աճառյանը՝ 1932թ.

Բարբառախոս՝

Անահիտ Օհանջանյան (ծնվ. 1892, Մեսրոպական)

ՕԽՅԻ ԱԶԸՂԸ
(Ողոհիի խոսվածք)

Մին օխց ա իլնծ՝ օխտը բալան ա իլնծ: Մին օր էթ օխցը բալաները հանըմ ա վօր շօռ ածի: Մին չօբան գ'օլիս ան, բալաներին սպանըմ: Մարը փախըմ ա՝ մըտըմ ա բունը: Մինչէվ իրէք ամիս էտ չօբանի բուխսունը պահըմ ա վօր կըծի, կարըմ չի կըծի: Մին օր ուրան բունի մաչիցը տըսնըմ ա, թէ չօբանը վօխչարը քըթըմ ա, ամանավը դինըմ ա ընդէդ, ինքը՝ չօբանը գինըմ ա վօր հէտ տա փախած վօխչարը: Օխցը բունիցը դուս ան գ'օլիս, էն բաղիին կաթնէն մաչը աղղու ա ածըմ: Մին մէրուքը յերգար էրքանջ գ'օլիս ան խըմըմ ա կաթնը, ըստակըմ ա ընդէդ: Ղուշըրը գ'օլիս ըն մօսը օտըմ, գինըմ ըն ծօվը՝ ջոնր խըմըն, ըստակըմ ըն, ինգըմ ըն ծօվը: Ծօվին մաչէն ծուկունները օտըմ ըն, կըտօրվըմ: Գէնցօղ-էկօղներն էլ ընդուց պըռնըմ ըն օտըմ, ուրնք էլ կըտօրվըմ:

*Գրանցել է Հրաչյա Աճառյանը՝ 1932թ.
Բարբառախոս
Մուշեղ Օհանյան (ծնվ. 1905, Ողոհի)*

ԱՌՅԻ ԱԶԸՂԸ
(Ռամիսի խոսվածք)

Մուն օխց ա ննլ՝ օխտու բալան ա ննլ: Մուն օր ատ օխցու բալաքը հանում ա էր շօռ ածի: Մուն չօբան ա գօլիս, բալաքը սպանում: Մարը փըխնալիս ա՝ մտում ա պոննո: Մինչնաք՝ իրիք՝ ամիս ատ չօբանի բուխտու պահում ա էր կըծի, գիրալիս չի կըծի: Մուն օր ուրան պոննին մէշից տըսնալիս ն, թէ չօբանը օխչարը կըթում ա, ամանավը տըրոմ ն ընդէդ, ինքը՝ չօբանը ննլիս ն էր հիտ տօ փախիսած օխչարը: Օխցու պոննիցի տոնս ն գօլիս, ան փաթըլի կօհնի մէշը աղու ածում: Մուն միրուքը ծիկ՝ էրքնջ գօլիս ն խումում կօհնու, ըստըկէլիս ն ընդէդ: Ղուշարը գօլիս ըն մէսը օտում, ննլիս ըն ծօվը՝ ճո՛ր խըմին, ըստըկէլիս ըն, ընգում ըն ծօվու: Ծավին մէշին ծոնկնրը օտում ըն, կըտօրվում: Ճընափա նացուդ-էկօղնին ալ նըրօց բըռնում ըն օտում, ուրնք ալ կըտարվում:

*Գրանցել է Հրաչյա Աճառյանը՝ 1932թ.
Բարբառախոս՝
Գրիգոր Գրիգորյան (ծնվ. 1886, Ռամիս)*

ՕԽՅԻ ԱԶԸՂԸ
(Փառակայի խոսվածք)

Մըն օխց ընսլ՝ օխտը բալան ընսլ: Մըն օր ատ օխցու բալաքը հանըմ ա օր մուն ածի: Մըն չօբան ա կ'օյիս, բալաքը սպանըմ: Մսրը փախիւրմ ա՝ մըտըմ ա պոնոն: Մինչսնսն իրիք՝ ամիս ատ չօբանի բուխսու պահըմ ա օր կըծի, գսրըմ չի կըծի: Մըն օր հոնրան պոնին մէջան տըսսըմ ա, թա չօբանը օխչարը կըթում ա, ամանօվը տիրիմ ս ընդէ, հինքը՝ չօբանը նայիս ս օր հիտ տօ փախիսած օխչարը: Օխցը պոնինսնի տոն ա կ'օյիս, ան բաղիին կօթին մէչը աղու ածըմ: Մըն մէրուքը հերգան էրքանջ կ'օյիս ա խըմըմ կօթնու, ըստակըմ ա ընդէ: Ղուշարը կ'օյիս ըն մէսը օտըմ, նայիս ըն ծօվը՝ ճոնր խըմին, ըստակըմ ըն, թափըմ ծօվու: Ծօվին մէջին ծուկուննին օտըմ ըն, կըտօրվըմ: Ճընապա նացուղ-գոնցուղնին ալ ունդուցա բըռնըմ ըն օտըմ, հոնրսք՝ ալ կըտօրվըմ:

*Գրանցել է Հրաչյա Աճառյանը՝ 1932թ.
Բարբառախոս՝
Սուրեն Աղամյան (ծնվ. 1906, Փառակա)*

ԱՅԼ ՆՄՈՒՇՆԵՐ ՌԱՄԻՍԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

Մանրապատումներ

Յըդնէցի Տէպան շօտ միծ քէնթ օնի նէլ: Ծըմէռն ալ էր մըրսում ա նէլ, հիվանդանում, ատ միծ քէնթը համ ալ կ'իրմորում ան նէլ:

Մէլքում ապարը հըրցանում ա նէլ.

- Տէ'պա, ատ ի՞նչ հանրանքանքում ըս:

- Մէլքո՛ւմ ապար, էր ծըմէռը հիվանդանում ըս, շօտ օրուտ ա էլնալ ուխման էխտը քամակ նէլի, թան մուն հիվանդ քէնթ:

Յըդնէցի Փօշտալյօն Դաթօ Ագուց Յաննան նանլիս հիտի ստակած օխչարի ջանդանք ա քաշ տալի:

Հըռցանում ուն.

- Դա՛թօ, ատ ջանդանքը ինչի՞ ըս հիտիտ քաշ տալի:

Ասում ա.

- Տանում ում Բանանյար, միր կ'ուլէրը օտին:

Մուն ցրդնեցու տրդա Բաքվից գօլիս մուն
աբբասի ա տալի, մուն օրծակ առնում, պերում կ'էղը:

Հոփաց բըխչումը օրծակը թըռում ա ծառին վերան
նըստում:

Հարը գօլիս ան տօն, հըռցանում ա.

- Աս ի՞նչ օրծակ ան.

Կընէկը ասում ա.

- Տըղատ ա մուն աբբասի տըված, առած:

Հարը թան.

- Ախըր իմ աբբասին ի՞նչ ա անում ծառին
պըտըկին:

Կօլխօզին ժողօվին վախտը մուն միծ կընէկ մուն
բըրախ ա տալի:

Ջանիլներից մունը անբըհանը ասում ա.

- Պանցվան՝ վ...

Ատ միծ կընգուն ախչիկն ալ ջըղօք ա տալի.

- Նօ դո՛ւշմոն ան գիդան, բըրախ ա տըվալ, տո՛ւ դօստ
ո՛ւս ճընանչէլի՝ բըռնա:

Մուն օր Սօնա նանան հոփան քաջուն հիտ
ծիյարանց վերան նըստօժ՝ նանիս ըն Իգոփիս:

Ծիյանքը ուտ ուն տըրում Իգիլնց մեյդանը թն չէ,
իգիլեցնց մունը ասում ա.

- Ա՛յ ժողովուրթ, Ռամուց էրկու պըմքնկի քօլա ին
էկած Իգոփիս: Ղարավուլ տըրեհիք՛, էր պոն ասօղ էլնն
չի:

Մուն շնփնթ մընալուց հէտավ աս ուսուց
կընանիք ծիյարը նըստօժ նանիս ըն հիտ՝ Ռամիս: Իգիլնց
մեյդանին կըշտավ նանիս Սօնա նանան թն.

- Ա՛յ իգիլիցիք՛, միք նանիս իք՛, շօտ շընօրակալ իք՛
ծիգանից, ծիր դարավուլներին հընեհիք:

Ըոըմեցի Հօվասափ կնրունքը նանիս ն Ախանմ-
գանլու՝ ըշխըտելի: Աս մարթը պուտի ննֆսից թոլ ն էլնծ:

Մուն օր աս Հօվասափ նանիս ն մուն նխանմ-
գանլեցու տընից մուն շտօփ կինի առնում, խըտըտած տոն
ն գօլի քոնչն: Պուտի գօլիս ն, մուն ալ մին թնվից մուն
կըտաղած ջօնգն ն տոն գօլի, հասնում ա աս
Հօվասափա, տիրում պըգտերի վերն, տանում ա, հէտավ
ալ վեր քըցում:

Աս Հովասափա ուսկուռները ճանաչում ան, համա
շտօփօվ կիինին խրտըտիցը քուցում չի:

Ասում ըն.

- Ա՛յ մարթ, տօնըդ չըքանդվի, ատ կիինին ինչի՞ չիս
վեր քիցիլ խրտըտիցըտ, էր սամթանվ վեր ընգիս նել:

Հովասափ թան.

- Արա՛, ատ ի՞նչ իք ասում, Հովասափ կիինին
խրտըտիցը քիցի՞...

Մանկական հաշվերգ

Ադուլ արա,
Տըմբըլ արա,
Հըրէշտակաց
Կարմունջ արա,
Աղլուշ-բաղլուշ,
Միպտանկ-միպտանկ
Ղարա քօջ:

*Գրանցել է Արտակ Վարդանյանը՝ 2018թ.
Բանասաց՝ Բորիս Միքայելյան
(ծնվ. 1943, Ջուլֆա)*

ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԱԽԱՌՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՈՂՈՀԻԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

Շէնիս կարոտը

Արիսէն գըլիսէն տօնըս իներ,
Մին հատ գամփըռ շօնըս իներ,
Մին հատ կըթան կավըս իներ,
Մին քանի հատ հավըս իներ:

Մին մըրքատու ծառըս իներ,
Մին բէրքատու արտըս իներ,
Իմ օրադօվ արտըս քաղիմ,
Յօրդա ձիիս բեռնէմ, բերէմ:

Սաղ մէր գ'աղը լուս ունէնար,
Լավ ապրուստի հույս ունէնար,
Իմ գամփըռըս գ'աղը պահէր,
Գ'նիլ ու գազան գ'աղ չըթօղէր:

